

453f

Գ. Ղարսեցիներ

Աշոտ-Քոչոյկեան

Բաղնիքային կառուցում
1918 թվին

9(47.92)
Ղ-46

թիվի 1919թ

2272

62

9147.92

31 AUG 2008

2-48 2011-08

ԳԵՈՐԳ ՂԱՐԱՋԵԱՆ
(Ս. Տ. ՍԵՂՈՍԵԱՅ)

ԱՆԴՐԿՈՎԿԱՄԻ ԲԱՆԱԲԱԿԱՆ
ԿԵԱՆՔԸ

1918 թիւ

ՀՐԱՏ. Խ. ԳԵՇԻՉԵԱՆԻ

1614

Թիֆլիս, տպարան Մաթեմատիկ
1919 թ. թ.

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Մեր այս համառոտ պատմական տվյալները Անդր-կովկասի 1918 թ. քաղաքական կեանքի մասին լայն տեսակետներ հրատարակելու սույն-գեմ. «Կայծ» թերթի ներկայ տարեայ յունվարի 7-ից մինչև փետրվարի 13-ի համարներում: Այժմ նա լայն է տեսնում առանձին դրոշմով:

Ինչպէս ընթերցողը կնկատէ, նրանում մենք չենք խնայել ոչ բառերով և ոչ էլ սոցիալ-գեմոկրատիայի վրացական հատուկը: Ի հարկէ՛ւ՝ պակցիտն բուրժուազական խմբակցութիւնները և շրջանները նման անողոր ըննադատական վերաբերմունքը կարող են օգտագործել իրանց նպատակների համար որպէս զէնք սոցիալիզմի և սոցիալիստական հուսակցութիւնների դէմ ընդհանրապէս: Սակայն չէ՛ կարելի՛ ամեն անգամ այդ երկիրդից կաշկանդուած՝ չարտայայտել և արտօնումը անցնել այն, ինչ որ անհնարին է: Մենք գրում ենք զլիստորապէս բանւորական դեմոկրատիայի, ժողովրդի աշխատանք լայն մասաների համար. նրանց գիտակցութեան զարգացման անհրաժեշտութիւնը, նրանց իսկական շահը պահանջում է հրապարակ հաներ, մերկացնել, ապացուցանել իրանց ղեկավար հուսակցական մարմինների և լիդերների սխալ աններելի գործողութիւնները, որոնք միայն նպատակում են պակցիտի և հակայեղափոխութեան ուժեղացման ամենից առաջ էէնց իրանց բանւորական շարքերում:



4314-91

9

զմ
եր
վե



Մեր վերաբերմունքը դէպի արդի բոլշևիզմը ինչպէս եղել է անցեալում, այնպէս էլ մնում է ներկայումս անփոփոխ: Սոցիալ-դեմոկրատիան այլ վերաբերմունք չէ կարող ունենալ դէպի նա: Եթէ մի հրաշքով հնարաւորութիւն ստեղծւի նրա համար փոխել իր վնասակար տակտիկան, իջնել ուսուցիչայի աշխարհից, ձեռք քաշելով այնպիսի էքսպերիմենտներից, որոնք դէպի կործանումն մղեցին երկիրը, այն ժամանակ միայն կփոխւի դէպի նա վերաբերմունքը այն սոցիալիստական կուսակցութիւնների, որոնք կանգնած են սոցիալիզմի գիտական և ոչ ուսուցիչաական տեսակէտի վրայ: Անկարելի է այստեղ լուծութեամբ անցնել այն, որ մեր ս. դ. ընկերներից շատերը ենթարկւելով վերջերս բոլշևիզմի ազդեցութեան, աարւել են նրա ցնորքներով, դարձել զրեթէ նոյն տեսակ «կոմունիստներ», ինչ որ լենինական բոլշևիկները: Ինորոշ է, որ նրանց մէջ կան և այնպիսիները, որոնք զեռ սրանէն մի տարի առաջ արժամադրւած էին ինչ ինչ միտումներով ձեռք ձեռքի տուած պար բռնել չխենկելիս՝ սոցիալ-դեմոկրատների հետ քաղաքական ասպարէզում: Իսկ այժմ նրանք էլ «կոմունիստներ» են և խորհրդային իշխանութեան կողմնակից են իրանց յայտարարում: Որ քամիկէտութիւնը մեր ներկայ անկման և ոչակցիացի օրերում տիրող և իշխող է հանդիսանում, զրանում ոչ մի կասկած չէ կարող լինել:

Իսկ թնչ ասել վրաց սոցիալ-դեմոկրատիայի մասին: Շատ քան և ոչինչ լաւ: Թողնելով մի այլ անդամի առանձնապէս և աւելի հանգամանորէն խօսելու նրա մասին, թոյլ ենք աալիս այժմէն իսկ մի քանի դիտողութիւններ նրա նկատմամբ: Շատերը սկսել են որոնել այժմ նրա «մետամոր-

ֆոզի», աւելի ճիշտը՝ նրա անկման պատճառները: Դա շատ հետաքրքրական և ուսանելի զբաղմունք է իհարկէ. սակայն մեզ թւում է թէ չի կարելի նրանում տեղի ունեցած փոփոխութիւնների պատճառների մասին ճիշտ գաղափար կազմել առանց ծանօթ լինելու նրա ծագման և զարգացման պատմութեան հետ: Բոլորովին սխալ է ասել, որ «վրաց սոցիալ-դեմոկրատիան լինելով գիւղացիութեան և քաղաքային մեշչանական մասսաների կուսակցութիւն, իր կազմով և նուզերանութեամբ մանր բուրժուազական է*)»: Այս կարծիքը հիմնւում է այն թիւր ըմբռնողութեան վրայ թէ կապիտալիզմից զուրկ մի երկրում, ինչպէս վերաստանն է, գոյութիւն չունենալով «վրաց բուրժուազիան և պրօլետարիատը», չէր կարող բնականաբար տեղի ունենալ սոցիալիզմի, սոցիալիստական շարժումների զարգացումն և բարգաւաճումն: Վրաստանում եղել են գիւղացիական, ազրաբային շարժումներ, ասում են մեզ, և «վրաց սոցիալիզմը» յենւելով այդ շարժումների վրայ մասսայական բնոյթ է ստացել, «անօրինակելի» յաջողութիւններ ունեցել: «Վր-

*) Տես Б. Ишханяшъ. Метаморфоза Грузинской Социаль-Демократии, Երես 8.

Այդ ինքնատիքեան հետաքրքիր զբոյնիկի հեղինակը, ինչպէս երևում է, դժբաղդարար լաւ ծանօթ չէ Վրաստանի սոցիալ-դեմոկրատիայի զարգացման պատմութեան հետ. վրաց սոցիալ-դեմոկրատիայի մետամորֆոզայի վերաբերեալ նրա արած դիտողութիւնները ճիշտ են, ինչպէս և ճիշտ են եզրակացութիւնները նրա մասին, սակայն մետամորֆոզի պատճառների հիմնաւորումը, մեր կարծիքով, ընդունելի չէ կարող լինել:

րաց սոցիալիզմը նախ և առաջ պէտք է կողմակերպէր գիւղացիական շարժումը ազրարային հողի վերայ, բայց ոչ պրօլետարական շարժում կապիտալիստական հիմքի վրայ, որի համար սկզբում զարգացման ոչ տեղ, ոչ հնարաւորութիւն կար: Եւ ոչ մեղանական Քիֆլիսը և նամանաւանդ Բուժայիսը—այդ երկու մրացական կենտրոնները—կարող էին հող լինել և սնունդ տալ սոցիալիստական պրօպագանդին, այլ Գուրիան—այդ սակաւահող և հողազուրկ գիւղացիութեան հայրենիքը—զարձաւ սոցիալիստական շարժման օրրանը Վրաստանում: Եւ որովհետեւ վրաց գիւղացիութիւնը արդէն ստացաւ իր պահանջների բաւարարութիւնը, նա անկականաւոր զարձաւ, ձեւեւապէս վրաց սոցիալ-դեմօկրատիան, որի կազմը գիւղացիական է եղել, բնակիւնաբար պէտք է այդ ուղղութեամբ մետամորֆօզի կենթարկուէր:

Ահա զատուցութիւններ վրաց սոցիալ-դեմօկրատիայի մասին, որոնք, կրկնում ենք, միայն թուրքմանութեան հետեանք կարող էին լինել:

Չէ կարելի սոցիալական կամ քաղաքական ամեն մի երևոյթ «սպեցիֆիկ» պայմաններով միայն բացատրել:

Վրաստանում պոլութիւն չեն ծննկեցիլ կամ զարգացման սպգմունն են գտնուել վրաց կապիտալիզմը», «վրաց բուրժուազիան», «սակաւա գործել են այստեղ հայ և օտար կապիտալը, հայ և օտար բուրժուազիան և որ ուշադրութեան արժանի է պետութեան կապիտալիստական ձեւնարկութիւնները երկաթուղային և արդիւնագործական այլ և այլ ձևերով»:

Ոչ մի աղութիւն Անդրկովկասում չունի որպէս կազմակերպւած դասակարգ այնպիսի կոմպակտ և բաղձամարդ պրօլետարիատ բաւիս գիտական իմաս-

տով ինչպէս վրաց ժողովուրդը: Շատ թոյլ է եղել մինչև այժմ «վրաց բուրժուազիան», վրաց կապիտալիստական, արդիւնագործական դասակարգը, մինչդեռ կազմակերպուել է և դոյութիւն ունի ուժեղ պրօլետարիատ:

Չխօսելով այն բոլոր պայմանների մասին, որոնք նպաստել են վրաց պրօլետարիատի ծաղման, անձան և զարգացման, յիշենք սրանցից այստեղ միայն վրաց գիւղացիութեան բացառիկ անտանտի վրձակը, անհագրութիւնը, սակաւահողութիւնը, վրաց աղւնական ֆէօդալ դասակարգի սխաւեմատիկ անտանտի շահագործումը, քաղաքական իշխանութեան ձեռնմեքը և հալածանքը, որոնք կատարեալ պառակտիզմ են բերելով, եթէ կուզէք «պրօլետարացնելով» գիւղացիութեան հոծ մասանները, մղում էին վերջնապէս դէպի երկաթուղագծի աշխուհները, զէպի քաղաքները—Բաթում, Քիֆլիս, Փոթի-և աշխատանքը մեծ ու փոքր մօտաւոր և հեռաւոր կենտրոնները:

Անդրկովկասեան երկաթուղագծի աստիճանի հազարաւոր բանւորների և ծառայողների անազխ մեծամասնութիւնը կազմում էին Գուրիայի, Իմերէթիայի, Մինգրիլիայի գիւղական շրջաններից գաղթած վրացի բանւորները. Երկաթուղու արհմտանոցներից և գէպօյում բացի անշուն սուրտ կազմող աւաններից և հայերից մեծ մասամբ վրացի բանւորներ էին: Քիֆլիսի կայարանի գէպօյում և արհմտանոցներում մի ժամանակ աշխատում էին 4—5 հազար բանւորներ—գլխաւորապէս վրացիք: «Մեղանական» Քիֆլիսի բախտաբախ, մեխանիկական, լուցկու, կաշի գործարաններում, սպարաններում, էլէկտրաքարշի վրայ և այլն վրացիք խոշոր տեղու էին կազմում. կապիտալիստական Բագուս ծննց կարելի է անել Բաթումը

Այդ քաղաքում ներկայ դարու առաջին տարիներին գոյութիւն ունէր նաւթի և արտասահման նաւթ փոխադրելու համար ժեստի արկղներ պատրաստող աւելի քան երկու տասնեակ գործարաններ, որոնց մէջ բանւորները խառնազոյն մասը նոյնպէս վրացիք էին. յիշենք նմանապէս Չիատուրի մարզանցի արդիւնագործութիւնը, որտեղ աշխատում էին մի քանի հազար վրացի բանւորներ: Վրաստանում այժմ էլ արդիւնագործութեան յիշեալ և թէ այլ ձիւղերում բանւորութեան ահագին տոկոսը կազմում են վրացիք:

Ահա այդ քաղաքային, երկաթուղային, հանքային և այլ արդիւնագործութեան և աշխատանքների բանւորութիւնը տասնեակ տարիներ շարունակ կըրթւեց քաղաքական-սոցիալիստական ուսմունքով. նրա առաջաւոր մասը—բանւորական սոցիալ-դեմոկրատիան դարձու հասարակական նշանաւոր ֆակտոր. նա էր զեկավարում յեղափոխական, սոցիալ-քաղաքական շարժումները, նա և միայն նա եղաւ, որ իր անմիջական ներգործութեամբ և ղեկավարութեամբ վըրացի գիւղերում ագրարային շարժումների ծագման և զարգացման զարկ տւեց. նրա օգնութեամբ և աջակցութեամբ գիւղացիութիւնը սկսեց քաղաքային բանւորութեան դասակարգային կռիւն յատուկ մեթոդներով և միջոցներով անձնէր և եռանդուն պայքար մըղել իր դարաւոր գիշառիչների-աղնւական ֆէօդալ կալւածատէրերի և նրանց պաշտպան կառավարութեան դէմ: Քաղաքն առաւ իր շարժման մէջ գիւղը: Այ թէ «Գուրիան է եղել Վրաստանում սոցիալիստական շարժման օրրանը», այլ Թիֆլիսի երկաթուղու արհեստանոցները և դէպօն, Թիֆլիսի Նախալովկան, և թէ կուզէք նաև միւս վայրերի—Բաթումի, Չիատու-

րի, Միխայլովկայի և այլն բանւորական Նախալովկաները: *)

Սոցիալ-դեմոկրատիան Վրաստանում, որը Անդրկովկասի և Ռուսաստանի միջազգային ս. դ. բանւ. կուսակցութեան անրաժան մասն էր կազմում, աւանգարդի դեր է խաղացել մեր անդրկովկասեան բանւորական միջավայրում. բոլորովին չի կարելի առել թէ նա «գիւղացիական մասը բուրժուազական» կազմ է ունեցել:

Վրաց սոցիալ-դեմոկրատիայի մետամորֆոզը տեղի ունեցաւ ոչ թէ այն հանգամանքի պատճառով, որ վրաց գիւղացիութիւնը իր պահանջների բաւարարութիւնը ստանալով և սեփականատէր դառնալով ներգործութիւն ունեցաւ այդ ուղղութեամբ կուսակցութեան քաղաքական կուրսի վրայ: Նա տեղի ունեցաւ զլիսաւորապէս ընդհանուր քաղաքական պատճառների և արտակարգ դէպքերի ազդեցութեան տակ նախքան ագրարային ռեֆորմ մտցնելը Վրաստանում:

Գերմանական իմպերիալիզմի յաղթութիւնները, 1917 թ. հոկտեմբերի բոլշևիկական յեղաշրջումը, Հիմնադիր ժողովի ցրումը, Բրեստ-Լիտովսկը, մի խօսքով Ռուսաստանում և Անդրկովկասում յեղափոխութեան վերին աստիճանի աննպաստ միմեանց յաջորդող այլ և այլ արտակարգ գէպքերի ազդեցութիւնը տեղահան արեցին վրաց սոցիալ-դեմոկրատիան իր նախկին ուղիից: Անկասկած է, որ տեղական, սպե-

*) Այս և այլ հարցերի մանրամասն լուսարանութիւնը և բազմաթիւ տեղեկութիւններ Անդրկովկ. շարժումների և սոցիալ-դեմոկրատիայի զարգացման պատմութեան վերաբերեալ կարելի է գտնել իմ «Равноч. Движ. и Социаль-Демократия на Кавказе» ոտուէրէն գրքում, հրատարակւած 1910 թ. Ժընևում:

ցիֆիկ պայմանները, սուբեկտիւ մոմենտը նոյնպէս խոշոր դեր խաղաց այդ մետամորֆոզի պրօցէսում։

Արաց սոցիալ-դեմոկրատիայի մէջ դրեթէ նոյնը տեղի ունեցաւ (փոքր չափով) ինչ որ համաշխարհային պատերազմի ծագման սկզբից գերմանական սոցիալ դեմոկրատիայի մէջ։ Արացի Չուդեկուսները, Շէյդեմաններն ու Կաւթիները յաղթանակը տարան արտաքին և ներքին արտակարգ դէպքերի ազդեցութեան շնորհիւ կուսակցութեան ձախակողմի վրայ։ Սոց. կուսակցութեան աշակերտման, օպորտյունիստական թեր ներշնչում և ազդանք լինելով բուրժուազական ինքնօգիտացից միջոց և մտնել տեղ-տեղացիայի զարգացման շրջանում սկսում է գլուխ բարձրացնել յոխորտանալ և պայքարել աւելի յանդգնաբար քան առաջ կուսակցութեան ձախակողմի դէմ։ Չխենկելիովը այդ թեր զայտուն արտայայտիչը՝ նոր հոսանք չէ վրաց սոց. դեմոկրատիան իրականութեան մէջ։ Նա կուսակցութեան իմաստը սկզբից մինչև այսօր գոյութիւն է ունեցել և նայած դէպքերին՝ աւելի կամ պակաս չափով արտայայտել է այս կամ այն ձևի տակ։

Միջազգային սոցիալ-դեմոկրատիայի ձախակողմեան թեր վրաստանում կազմում էին վրացի բուրժուակները, որոնք անշատեցին սոցիալ-դեմոկրատիայից, հայ, ռուս, հրէայ սոցիալ-դեմոկրատները և այն փոքրաթիւ վրացի սոցիալ-դեմոկրատները, որոնք պարտաբար էին չխենկելիստաների դէմ և որոնք ի վերջոյն հանլեցին այդ նագիտակիստական հոսանքի դրոհի առաջ։

Մի ուրիշ կարևոր հանդամանք պէտք չէ նոյնպէս աչքաթող անել։

Վրաց բանւորական դեմոկրատիայի դեկավաթ

ինտելիգենցիայի ահագին մեծամասնութիւնը թաւադ ազնւական դասակարգից ծագում ունի, այդ դասակարգի ժառանգներն են և բնականօրէն նրա արտակցիւանների ազդեցութիւնը և հոգեբանական հակումները չէին կարող նրանցից բոլորովին վերացած լինել։ Լուսաւորութեան և քաղաքական կրթութեան ազդեցութեան շնորհիւ նրանք ազատագրւեցին իրան սեփական դասակարգի ինքնօգիտացից և կանգնելու նոր ուժովի օլաշտայնութեան տեսակետի վրայ, իւրացնելով նորն իսկ սոցիալիստական ուսմունքը։ Սակայն ռեակցիայի և արտակարգ դէպքերի վերին աստիճանի ճնշիչ ազդեցութեան տակ նրանց մէջ տեղի ունեցաւ մասսայական բեւեգատութեան և դաւաճանութեան սասկալի երևոյթը։ Այդ երևոյթը անյայտ չէ քաղաքական պատմութեան մէջ, դրա փայլուն արտայայտները դուր կրանէք Ֆրանսիական յեղափոխութիւնների, մալաւանդ Մեծ Ֆելափոխութեան պատմութեան մէջ։

Շատ բան կար ստելու վրաց սոցիալ-դեմոկրատիայի մետամորֆոզի և նրա դեկավաթների անկման մասին, բաւականա՛նա՛նք առ այժմ սրանով։

Մեր ներկայ դրութեան մէջ մենք անողոր ենք եղել «լիդերները» վերաբերմամբ, մենք ինկատի ենք սուկեցել քացառապէս նրանց զաղափարական դործունեութիւնը և ոչ մի այլ որակ նպասակ։

Մի այլ կարեօք դիտարկութիւն ևս։

Անցեալ տուրի առաջին ամիսներից եւ խորապէս համոզւեցի այն բանում, որ վրացի ա. դ. «լիդերները» շեղւելով դասակարգային կուր սկզբունքից կանգնեցին ազգային-բուրժուազական հողի վրայ, երբ Չխենկելիստական ռեակցիոն հոսանքը յաղթանակը տարաւ, ինձ այլևս ոչինչ չէր մնում, բայց միայն և-

րես դարձնել ու փախչել նրանից ինչպէս սատանայից: Անցեալ տարի մայիսի 25-ին նամակ ուղղեցի կուսակցութեան բարձրագոյն օրգան—ընթացիկին կոմիտէին, որի տնօրէն և փոխ-նախագահն էի, տալով նրան մեզ բաժանող սկզբունքային տարաձայնութիւնների բացատրութեան հետ նաև իմ հրատարականը:

Ինչպէս անցեալում, այժմ էլ առիթից օգտուելով իմ պարտքս եմ համարում յայտարարելու, որ Չխենկելի-Փորդանի-Րամիշլիու ուստիմը ոչ ղեմակրատական է և ոչ էլ նման մի բան, այլ նացիոնալ-բուրժուազական: Խիստ քննադատել այդ ուստիմը չէ նըշանակում ցանկանալ տեսնել նրա փոխարէն Վեշապելի-Գոտուա-Դազաւայի վատթարագոյն ուսուցիչն ուստիմը: Անարխիստը միայն կարող է նման ձգտում ունենալ: Փորդանեանների, Րամիշլիւիների ուստիմը քննադատուում և պախարակուում է այն չափով, որ չափով նրանք կանգնած են Վեշապելիների նացիոնալիստական քաղաքականութեան տեսակէտի վրայ, հետապնդում ու պաշտպանում են այդ տեսակէտը:

Վրաց բանւորական գեմոկրատիան յափշտակուած է իր «լիդերների» հմայքով, նրանց զօրեզ ազդեցութեան տակ նա չէ զգում այն նացիոնալիստական կողմաբը, որով նա ներկայումս կաշկանեւած է: Անցեալ տարի նրան իր «լիդերները» անջատեցին Ռուսաստանի և Անդրկովկասի ղեմակրատիայից և մղեցին նրան յանուն «խաղաղասիրութեան», «ազգերի հասերաշխութեան» և ազգի «ֆիզիքական զոյուութեան» ղէպի ամենաուսուցիչն մուսաւաթիստական և գերմանաճկական դաշնակցութիւնը:

Այն օրը, երբ վրաց բանւորական գեմոկրատիան կսթափւի իր «լիդերների» ներշնչած նացիոնալիստա-

կան քաղաքականութեան հիպոթից, կլինի մեր երկրի միջազգային գեմոկրատիայի քաղաքական կեանքի պայծառ օրերից մէկը:

Ս. Տ. ԱՐԿՈՄԵԴ

15 յուլիսի, 1919 թ.

Թիֆլիս

Այն, ինչ որ զլիաւորապէս աչքի էր ընկնում մուսաստանը կազմող զանազան տերրիտորիաների և ազդու թիւնների քաղաքական կեանքում, զա կենդրոնախոյս քաղաքական տենդենցն էր հակառակ այն քաղաքական և սօցիալական տենդենցի, որով մինչև այդ՝ ընթացել էր մուսաստանը տասնեակ տարիներից ի վեր, այսինքն հակառակ քաղաքական կենդրոնաձիգ տենդենցի:

Կարիք կայ արդեօք շեշտելու, որ մուսաստանի ժողովուրդների քաղաքական միաւորման ձգտումը աւելի թոյլ արտայայտւեց, քան քաղաքական կենդրոնախոյս և անջատական ձգտումը: Նացիոնալ ֆակտորը, ինչպէս արգէն մի քանի անգամ աւելի եմ ունեցել յայտնելու *), աւելի ուժեղ թափով արտայայտւեց, քան սօցիալականը:

Տեղային, ինդիվիդուէլ (անհատական) շահերի զարգացման պաշտպանութեան կոյր, տարրերային և սխալ ըմբռնումը, որով յետ էր մղւում ընդհանուրը և համերկերայինը, առանց որի մասնաւորը և տեղայինը միշտ դատապարտւած է լինում ճահճային վիճակի, յետաձուցութեան և դանդաղեցումների, պաշարեց նոյնիսկ այնպիսի հասարակական և քաղաքական խաւերին և խմբակցութիւններին, որոնց նման ըմբռնողութիւնը օտար պիտի լինէր:

Գարտիկուլիարիզմը և նացիոնալիզմը յաղթանակեց, բայց այդ յաղթութիւնը իր հետ բերում էր և իր պարտութեան անխուսափելիութիւնը: Ժողովուրդները երկարատե և մնալ իրանց սեփական կաշւի և խրուհի մէջ չեն կարող. տնտեսական և քաղաքա-

*) Տես „Կայծ“ № 15 „Կովկասեան Բաղկաններ“ խորագրով յօդւածը:

կան կեանքի զարգացման անդիմադրելի պահանջների առաջ քաղաքական միութիւնը նրանց համար նոյնքան կենսական անհրաժեշտութիւն է ներկայացնում, որքան օդն ու ջուրը մարդկային օրգանիզմի համար:

Մի այլ պատմական իրողութիւն, որը նպատեց մուսաստանի պետական կեանքի կազմալուծման և մղեց նրանում ապրող ժողովուրդներին դէպի անհատականացման պրօցեսը, դա կենդրոնական մուսաստանում գիւղացիական և բանւորական լայն մասսաների հիմնողը և յափշտակութիւնն էր կենտրոնական բուշեիզմով, մի հոսանքով, որը իր սօցիալական մաքսիմալիզմով մուսաստանի ներկայումս գոյութիւն ունեցող քաղաքական տնտեսական պայմաններում անարխիզմի բնոյթ ընդունեց: Իսկ անարխիզմը և նրա գործելակերպը մղւում է մասսաներին դէպի բացարձակ, ծայրայեղ ինդիվիդուալիզմը, որ շատ հաճելի է լինում և նպաստաւոր միայն ունակցիոն բուրժուազիայի համար: Անարխիստացած բուշեիզմը արեց մուսաստանում միայն այն, որ իր մաքսիմալիստական գործունէութեամբ իրան յետևից գնացող հիպոտոզացած անդիտակից մասսաների անմիջական մասնակցութեամբ նպաստեց երկրի տնտեսական և քաղաքական կեանքի կազմալուծման, իր հետապնդած „քաղաքացիական կուէի“ լողունով պառակտեց բանւորական և գիւղացիական զեմոկրատիայի միութիւնը, մղելով նրա նշանաւոր մասը դէպի ունակցիայի գերկը իսկ ժողովուրդներին դէպի քաղաքական անջատումն ու կղզիացումը:

Անդրկովկասը ենթարկեց գրեթէ նոյն ոյժերի և ֆակտորների ազդեցութիւններին, ինչ որ ընդհանրապէս մուսաստանը:

Թէ ինչ և ինչպիսի քաղաքական կեանքի մո-

մենտներ ասորեց Անդրկովկասը տնցեալ 1918 թւին, այդ մասին համառօտակի կաշխատեմ արձանագրել:

Ռուսաստանի մայրաքաղաքներում տեղի ունեցած 1917 թւի հոկտեմբերեան բոլշևիկական յեղաշրջումը, որի անմիջական հետեանքն եղաւ Կերենսկու կօալիցիոն կառավարութեան անկումը և խորհուրդների իշխանութեան սահմանումը, որին ձըղթում էր լենինական հոսանքը, անխուսափելիօրէն առաջ բերեց խրատումներ Ռուսաստանի պանազան մասերում: Սոցիալիստական խորհուրդների իշխանութիւնը, որը իր մաքսիմալիստական ծրագրի կիրառման ջանքերով բնականօրէն տէտք է դիմէր մի շարք բռնի և յաճախ անզուսպ զործողութիւնների, որոնց մէջ Սահմանագիր ժողովի ցրումը դարձաւ ամենատրագրեկականը Ռուսաստանի քաղաքական ապագայի համար՝ չնդունեց և չճանաչեց, Ռուսաստանի շատ տերրիտորիաների և ժողովուրդների կողմից:

Ժամանակաւոր կառավարութեան տապալումից յետոյ վերացաւ Անդրկովկասում նշանակած կառավարութիւնն էլ.— Օղակումը (Особый Закавказский Комитет): Նրան փոխարինեց մի նոր կառավարութիւն— Անդրկովկասեան Կոմիսարիատ անունով. (Закавказский Комисариатъ—Закомъ), որը կազմեց 1917 թ. նոյեմբերին բոլոր քաղաքական յեղափոխական խումբակցութիւնների և Անդրկովկասեան դեմոկրատիայի Թիֆլիսի կենդրոնական մարմինների փոխադարձ համաձայնութեամբ և որոշումով: Մինչ այդ՝ երկիրը կառավարւում էր Ժամանակաւոր Կառավարութեան Կրահանգներով և կանոններով:

Երկիրը զուրկ էր օրէնսդրական մի բարձր մարմնից: Գոյութիւն ունեցող բազմաթիւ բանւորական դիւզացիական և զինւորական խորհուրդները և այդ

խորհուրդների երկրային կենտրոնները Թիֆլիսում կատարում էին մասամբ օրէնսդրական Ֆունկցիա, բացի այն, որ նրանք ծնունդ էին առել գլխաւորապէս յեղափոխութեան շրջանում անհրաժեշտ վարչական դեր խաղալու պատերազմի և Եին ռեժիմի շնորհիւ անարխիայի մատնւած երկրում:

Անդրկովկասեան Կոմիսարիատը, ինչպէս նաև խորհուրդների երկրային կենտրոնները, որոնցից կախումն ունէր առաջինը, չընդունելով և չճանաչելով Ռուսաստանի բոլշևիկական խորհուրդների իշխանութիւնը, անհրաժեշտութիւն գագային ունենալու գոնէ ժամանակաւորապէս օրէնսդրական մի մարմին, այդ մարմինը Անդրկովկասեան Սէյմ անունով ստեղծեց. նրա մէջ մտնում էին Սահմանագիր ժողովի համար ընտրւած պատգամաւորները և քաղաքական կուսակցութիւնների ցուցակների թեկնածուները եռապատկւած թւով:

Սէյմի պաշտօնական բացումը և առաջին նիստը տեղի ունեցաւ փետրուարի 10-ին:

Սէյմ հրաւիրելու անհրաժեշտութիւնը աւելի զգալի եղաւ Սահմանագիր ժողովի ցրումից յետոյ, քառակ Ֆորմուլայով ընտրւած ամենահեղինակաւոր ժողովրդագետական ներկայացուցչական մի հիմնարկութիւն, որից սպասուում էր Ռուսաստանի քաղաքական կեանքի կազմակերպումը և ապագան:

Ճշմարիտ է, Սէյմը մարմին առաւ, որպէս քաղաքական ազակենտրոնացման մի կոնկրետ նմուշ, մի քաղաքական-օրէնսդրական հաստատութիւն, որը կարող էր որոշ բարեյաջող հանգամանքներում քաղաքական դեր խաղալ երկրում բառիս լուսագոյն իմաստով. բայց մի կողմից նրա անզամկերի կազմը, որի մեծագոյն մասը ներկայանում էին փոխադարձ ան-

տագոնիզմով լարւած նացիոնալիստ էլեմենտները և միւս կողմից ներքին և արտաքին ուձակցիոն ոյժերի և հոսանքների արագ աճումը, նրանց նւաճութենքը և արշաւանքը դէպի երկրի քաղաքական միութիւնը և ազատութիւնները, հնարաւորութիւն չէին կարող տալ Սէյմին աւելի երկարատե կեանք ունենալու. նա իրօք երեք ամիս կեանք ունենալուց յետոյ միայն մահացաւ:

Կենդրոնական Կառավարութեան և Սէյմի հետ միաժամանակ գոյութիւն ունէին «Ազգային Խորհուրդներ» և «ազգային գործմասեր», որոնք հանդիսանալով որպէս «պետութիւններ պետութեան մէջ» նշանաւոր չափով նպաստեցին նոյնպէս երկրի մի և ամբողջական պետական օրգանիդատ կազմալուծման:

Վերջապէս փետրւար ամսին կնքւեց Բրէսաւ կառուցիկ դաշնագիրը «Ժողովրդական կոմիսարներ» կոչւած բոլշևիկական կառավարութեան և իմպերիալիստական Իերմանիայի միջև. Սա մի ակա էր, որը նորանոր աղէտների շրջան էր բացում Ռուսաստանի և թէ մասնաւորապէս Անդրկովկասի համար: Իսկ վերջին մահացու հարւածն էր, որ տրւեց երկրի ինքնուրոյնութեան, քաղաքական անկախութեան և միութեան:

II

Բրէսաւ կառուցիկ փետրւարի 18-ի (մարտի 3-ի ն. տ.) կնքած դաշնագիրը, ինչպէս ասացի, մի աննախընթաց դիպլոմատական ակա էր, որով միջին կայսրութիւնների իմպերիալիստ պետութիւններին իրանց գաճաճ քաղաքական դաշնակիցների՝ Թիւրքիայի և Բոլղարիայի հետ, հնարաւորութիւն էր սուրուումանքսիա պնելու լայնատարած տերրիտորիաները, ռոնատակ աալու Ռուսաստանի և նրա բաղկացուցիչ տերրիտորիաների անտեսական և քաղաքական ինքնուրոյնութիւնը և ազատօրէն ներս խուժելու ամեն կողմից երկրի խորքերը:

Բոլշևիկական խորհուրդների իշխանութիւնը և լենինական բոլշևիզմը, որը իրան այժմ «կոմմունիստական» է անւանում և որը ցոյց է աալիս թէ ընդօրինակում է Պարիզի կոմմունայի գործունէութիւնը, հանդէս եկաւ ոչ թէ վերջինիտ պէս անձնագոհութեան օրինակով սուրը ձեռքին պարլետարիատը և ազատութիւնները պաշտպանելու, այլ նա «հարկադրւած անգրիմադրելի հանգամանքներից» (յանցաւորների սովորական սերելի լսուքը) կատարեց միայն ինքնասպանութեան մի գործողութիւն, բանակցելով գերմանական գիշատիչ և մարդակեր իմպերիալիստների հետ և ստորագրելով նրանց թիւադրած ամենատարացուցիչ պայմանները:

Սյն, ինչ որ կատարեց մեծ չափով Բրէսաւ-Լիսկում, կատարեց աւելի փաքը չափով Տրապիզոն

պիղոնում և Բաթումում շնորհիւ Չեխնկելիների ու Ռամիշլաիիներին: Անհերքելի է, սակայն, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը հանդիսացաւ Տրապիզոնի և Բաթումի դաշնագրերի պոստուլատը:

„Կոմմունիստական“ կուսակցութիւնը Ռուսաստանում և վրացական „սոցիալ-եմոկրատիան“ Անդրկովկասում, որոնցից ամեն մէկն պատասխանատու էր իր երկրի առաջ, ինչպէս ասացի, „հարկադրւած անդիմադրելի հանգամանքներէց“ կնքեցին վերին աստիճանի ստորացուցիչ դաշնագրեր: այդպիսով նրանք խաչ գրեցին իրանց կոմմունիստական և սոցիալիստական էութեան վրայ: Ինչո՞ւ. որովհետեւ նրանք փախուսաւ տւին պայքարի հնարաւորութիւններից, չսպառնցին կուռի այն բոլոր միջոցները, որոնց գործադրութիւնը միայն ապացուցանում է յեղափոխական և սոցիալիստական լինելը, տալիս է նրանց էութեան աստատացիան: Բացի այն, որ նրանք խոյս աւելցին և չուզեցին սպառել կուռի բոլոր հնարաւոր միջոցները, նրանք նոյնիսկ իրանց արամադրութեամբ, իրանց գործելակերպով և քայլերով ընդառաջ գնացին իմպերիալիզմի նպատակները դիւրացնելու և իրագործելու: Վերջապէս ամենքի համար այսօր պարզ պէտք է լինի, որ այն ինչ որ կարող է թոյլատրելի լինել բուրժուազական, նացիոնալիստական խմբակցութիւններին, օրինակի համար կազմաներին Ռուսաստանում և դաշնակցականներին Անդրկովկասում, թոյլատրելի չէ կարող լինել սոցիալիստական և լաւագոյն մտքով կոմմունիստական կուսակցութիւններին:

Համաշխարհային պատերազմը տւեց ըստ ոյական անկէման բաղմաթիւ օրինակներ և փաստեր սոցիալիստական շրջաններում. նրանց թւին աւելացաւ նոյ՞

պէս Ռուսաստանի և մեր երկր սոցիալիստական կուսակցութիւնների ղեկավարներից շատերի անկէման անհերքելի փաստը:

Բրեստ-Լիտովսկի, Տրապիզոնի, Բաթումի գաշնագրերը մէկը մյուսից բղբոզ, օրգանական կապեր սննեցող ակտեր են. այդ գործողութիւնները տեղի ունեցան իմպերիալիստներին „կոմմունիստների“, „սոցիալիստների“ միջև:

Յայտնի է, որ Թիւրքիան 1917 թ. աշնան դիմաց Անդրկովկասի կոմիսարիատտին մշտական „բարեկամական“ հաշտութիւն կնքելու առաջարկով, յանուն „մարդասիրութեան“ վերջ տալու եղբայրաբար: պատերազմին: Թիւրքիայի այդ „խաղաղապիտական“ հրաւերը անկեղծութեամբ և ուրախութեամբ ընդունւեց մեր երկրի ղեկավարող սոցիալիստական շրջաններում:

Անդրկովկասի կոմիսարիատտի կողմից, յեղափոխական և քաղաքական խմբակցութիւնների կենդաններից ընտրւած մի պատուիրակութիւն ուղարկւեց Երզնէա, որի մէջ մասնում էին Սմիլնով (ս.-դ.) Թէվ գայիս (ս.-գ.) Չամալեան (դաշն.) և գեներալ Վեշինսկի:

1917 թւի գեկտեմբերին կայացաւ Երզնէայում գինադարարի պայմանագիր: Բայց ղինադարարի պայմանների խախտումը, որը անսպասելի չէր Թիւրքիայից և ոչ էլ նրա թիկունքում կանգնած Գերմանիայից, շատ շուտով տեղի ունեցաւ իրօք հենց նրանց կողմից: Թիւրքիայի և նրան տոն տուող և թելադրող Գերմանիայի համար գինադարարը միայն մի պատրուակ էր ժամանակ վատտակելու Անդրկովկասի պաշտպանութեան սահմանական ոյժերը թուլացնելու և ջլատելու համար:

Չինադադարի 3—4 ամիսների ընթացքում մինչև Տրապիզոնի հաշտարար բանակցութիւնները, թիւրքերի առաջին զարգացումը փաստօրէն շարունակեց: Թիւրքերի առաջն գծաբուրեթիւնների մէկը միւսի յետեից գրաւեց Երզնկան յունւարի 30-ին, Բայբուրդը՝ փետրւարի 4-ին, Մամախաթունը՝ փետրւարի 8-ին և Էրզրումը փետրւարին 29-ին:

Այս հանգամանքը կարծես դեռ բաւարար չափով խրատական դաս չէր Անդրկովկասի քաղաքական-պետական դեկավարող շրջանների համար, որ նրանք շատ զգուշաւոր և հեռատես քաղաքականութեամբ վերաբերւէին Թիւրքիայի հետ «հաշտարար» բանակցութիւններ սկսելու և վարելու հարցին, որ նրանք գէթ փոքր ինչ մտածէին այն բանի մասին, որ Ղինադադարի պայմանները խախտողի հետ հաշտութեան բանակցութիւնների մէջ մտնելու վճիռը մի շատ բխկոտ վճիռ էր և կամ եթէ նրանց խաղաղասիրական տրամադրութիւնը տաքութեան այն աստիճանի վրայ էր կանգնած, որ թելադրում էր նրանց ինչ որ էլ լինէր հաշտութիւն կնքել կործանաբար պատերազմին վերջ տալու համար, այդ գէպքում նրանք կաշուից պէտք է դուրս գային սպասելու բոլոր միջոցները երկրի ինքնապաշտպանութիւնը ապահովելու տաճկական բարբարոս հրոսակների առաջխաղացման վտանգի առաջ: Բայց մենք չտեսանք ո՛չ այդ տրամադրութիւնը և ո՛չ էլ նման քաղաքականութեան պէս մի բան երկրի դեկավարող պատասխանատու քաղաքական շրջաններում: Ընդհակառակը մենք տեսանք, որ «Սզգային Խորհուրդները» և նրանց վարիչները իրանց անջառ, հակապետական քայլերով և զործելակերպով թուլացրին կենդրոնական կառավարութեան մեխանիզմը. վարկաբեկեցին այդ կառավարութեան նշանակութիւնն ու իրաւաւորութիւնը. մենք տեսանք՝

որ նրոյն իսկ կենդրոնական կառավարութիւնը հաւատարապէս իր ուշադրութիւնը չէր դարձնում երկրի վտանգած բոլոր սահմանների վրայ. նրա ներկայացուցիչները այցելում էին լուրջ վտանգի բողոքներին Բաթում, Օզուրգէթ, Փոթի գիրքերը ամառացնելու նպատակով, մինչդեռ նրանցից մէկը չգտնեց, որ գնար Մարիդամիշ, Ղարս կամ Ալէքսանդրապոլ տեղնուտեղը ծանօթանալու գրութեան հետ և ըստ պահանջին՝ դիրքեր ամառացնելու համար միջոցներ ձեռնարկելու: Քաղաքական-պետական միակողմանիութեան այս ցուցից կամ աւելի շուտ հակուրութիւնից բնւած էին ամենքը. չքացել էր համերկրային, համապետական շահը ըմբռնելու և պաշտպանելու ընդունակութիւնը:

Տրապիզոնի «հաշտարար» կօնֆերենցիան կայացաւ փետրւարի 27-ից մինչև ապրիլի 1-ը:

Մինչև Տրապիզոնի այդ տրապիզոնի կոմիտեան, Անդրկովկասում տեղի ունեցան մի շարք լուրջ գէպքեր:

Բոլշևիկական հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ դասակրթութիւնը շատ աւելի լայն չափեր ընդունեց քան մինչև այդ ժամանակ տեղի ունէր նա: Անդրկովկասեան ձուկատներից մասսայական լքումն ու փախուստը լուրջ կացութիւն էր ստեղծում երկրի համար. իսկ Բրեստ-Լիտուսկի հաշտութիւնից յետոյ կատարեալ լաւայի պէս ռուսական զօրքերի մի հոսունք սկսեց զօրաճակատներից գէպի Ռուսաստան, որը իր ընթացքում առաջ բերեց թէ իրանց գաղթող զօրքերի և թէ տեղական ազգաբնակչութեան համար մեծամեծ չարիքներ. արիւնհանդ ընդհարումներ, թալան և անխնայ կոտորած: Ռուսական զօրքերի փախուստը և ձուկատների կատարեալ մերկացումը ձուկատազրական նշանակութիւն ունեցաւ մեր երկրի

համար. ամեն տեղ Քրօնտը անդաշտապան մնալով, տեղական ռազմական ուժերը չէին կարող բաւարարել սահմանների ապահովութիւնը և պաշտպանութիւնը, հետևապէս տաճիկները և նրանց օգնող զերմանացիք հնարաւորութիւն ստացան շատ կարճ ժամանակամիջոցում արագացնելու իրանց յարձակողական արշաւանքը և ներս խուժելու մեր երկրի խորքերը:

Տաճիկական շարժումաժը և գործակալութիւնը ստատիկ զարգացաւ մասնաւանդ զինադադարի ամիսների ընթացքում. տաճիկական էմիրսները վիստում էին մեր երկրի առաւելապէս թուրքաբնակ վայրերում: Տաճիկական պրոպագանդը և ազիտացիան թուրքական խաւերում մղում էր անարգել և ազատօրէն: Այդ դերում մեծապէս աջակցեց և օգնեց թիւրքիային տեղական թուրք բէկութիւնը: Համարձակ կարելի է ասել, որ չլինէր թուրք Ֆէօզալ այդ տարրի աջակցութիւնը թիւրքիային և դաւաճանութիւնը մեր երկրին, տաճիկները չէին կարող ներս խուժել և տիրել մեր երկրին այնպիսի հեղուկութեամբ, ինչպէս այդ տեսանք անցեալ 1918 թւի գարնան սե ամիսներին:

Պէտք է այստեղ մատնանշել մասնաւանդ թուրք բէգական և բուրժուազական Մուսաւաթ անունով յայտնի քաղաքական կուսակցութիւնը, որը սկզբից մինչև վերջը իր դաւաճանական գործողութիւններով և արարքներով ձեռք ձեռքի աւած էնւեր-Թալաթի կառավարութեան հետ, հանդիսացաւ մի կատարեալ պատուհաս Անդրիովկասի քաղաքական և կուլտուրական կեանքի համար:

Մուսաւաթիստները և տաճիկ օգենտները պրովոկացիոն գործունէութեան շնորհիւ և նրանց դեկավարութեամբ թուրք անդիտակից և խաւար զինւած մասսաները սկսեցին աակն ու վրայ անել երկիրը

Թալանելու կոտորել, երկաթուղիները ջաբղել, ճանապարհները ոչնչացնել, կամուրջները քանդել և այլն: Հայ զինւած խմբերի հետ ընդհարումները աւելի ևս ստատակացրին դժոխային դրութիւնը, որի մէջ թաւալած էր երկիրը: 1905—6 թւականների Վանդէան կրկնեց և 1918 թւին, բայց աւելի աղէտաբեր, աւելի սղբերգական ձևերով և չափերով: Աւերակցին հարիւրաւոր շէն գիւղեր, ամայացան ամբողջ աայոններ: Ժողովուրդները տեղահան եղան, տալով անթիւ ու անհամար զոհեր և նահատակներ:

Մինչ մեր երկիրը հեկատօմբերի էր վերածւում, մեր արագի-կոմիկները բանակցում էին տաճիկների հետ Տրոպիկոնում:

Այդ բանակցութիւնների և նրանց յաջորդող դէպքերի մասին կլինի այժմ իմ խօսքը:

Անդրկովկասի Սէյմը իր փետրուարի 16-ի նիստում միաձայն որոշեց յատուկ պատերազմութիւն ուղարկել Տրապիզոն հաշտութեան բանակցութիւններ մղելու թիւրքիայի հետ: Պատերազմութեան կազմը հետևեալն էր. նախագահ՝ Ա. Չխենկելի (ս. դ., արտ. գործ. նախ.), անդամներ. Գ. Ս. Բաշիճէ (ս. դ.), Գլազաւ (նաց. դեմ.), Լասխիշելի (սոց. Ֆեդ.), Քաջազ-նունի և Ստախանան (դաշն.), Նէյխիւլիսլամով (հում-մեախատ), 2 մուսաւաթխատ, 1 մուս. սոց. բլոկից և 1 Ռուսաստ. մուս. կուսակցութիւնից, ընդամենը 11 հոգի: Սրանց ուղեկցում էին բաղմաթիւ զանազան պիտանի և ոչ պիտանի անձինք, ինչպէս և 50 հոգուց բաղկացած զինւած պահակախումբ:

Թիւրքական դելեգացիայի անդամների թիւը համեմատաբար աւելի սակաւ էր. նրա նախագահ նըշանտկաւ չէր թիւրքացած գերմանացի խորամանկ դիպլոմատ՝ Բաուֆ Բէյը:

Երկու կողմերը առաջին տնգամ Տրապիզոնում հանդիպեցին փետրուարի 27-ին:

Երկարատև կանգ առնել երկու կողմերի վարած բանակցութիւնների և կօնֆերենցիայի աշխատանք-ների մասին կնշանակէր 1918 թւի մանրամասն քաղաքական պատմութիւն գրել, մի բան որ ես ներկայումս այդ տնելու դիտաւորութիւնը չունիմ: Ես կարճանագրեմ կօնֆերենցիայի միայն զլխաւոր մո-մենտները:

Սէյմը իր փետրուարի 17-ի նիստում ընդունել էր թիւրքիայի առաջարկելիք հաշտութեան չորս կէտեր, որոնք որպէս սկզբունք մեր պատերազմութիւնը պէտք է եռանդուն կերպով պաշտպանէր հաշտութեան բանակցութիւնների ընթացքում: Սակայն մի այդպիսի պաշտպանութիւն մենք չենք տեսնում: Ընդհակառակը մեր «դիպլոմատները» մտավախութիւնը, ապիկարութիւնը և քաղաքագիտական կարճատեսու-թիւնը հենց առաջին օրից նկատելի է դառնում:

Կօնֆերենցիայի պաշտօնական բացման օրից, այսինքն մարտի 1-ի առաջին նիստից սկսած արդէն Բաուֆ Բէյին յաջողում է շատ ճարպիկ դիպլոմատական խաղերով մեր պատերազմութեանը ծուղակի մէջ գցել, որից սա, չնայելով իր կոնսուլսիւ շարժումներին, չէ կարողանում այլևս դուրս գալ:

Բաուֆ Բէյը շատ զուշուշութեամբ և կեղծ ու պատիր խօսքերով առաջարկում է ներկայացնել «սուտը տեղեկութիւններ կովկասի հանրապետութեան քաղաքավարչական կազմակերպութեան, ձևի և էութեան մասին»: *)

Մեր պատերազմութիւնը փոխանակ ղեկավարելու իրան տւած ցուցմունքներով և ամուր կանգնելու հենց յղբից Սէյմի որոշումների պաշտպանութեան տեսակէտի վրայ, երկրորդ նիստին պատասխանում է տաճիկներին մի գրաւոր յայտարարութեամբ, որի մէջ ցոյց է տալիս որ «բոլշևիկական յեղաշրջումից յետոյ Անդրկովկասում առաջ է եկել ինքնուրոյն մի կառավարութիւն, որը պատասխանատու է Սէյմի առաջ և որ Անդրկովկասը փաստօրէն ներկայացնում է իրանից մի պետութիւն, որը մտել

*) Տես պատերազմութեան Սէյմին ներկայացրած ղեկուցումը:

է միջազգային յարաբերութիւնների շրջանը, բողոքել է առանց իր գիտութեան կնքած Բրեստ-Լիտովսկի դաշնագրի դէմ, թէև դեռ ևս չէ յայտարարել և պաշտօնապէս չէ հաղորդել պետութիւններին իր անկախութեան մասին (ընդգծումը իմս է. Ս. Տ. Արկ.):

Նո գիտութեամբ առաջ բերեցի այս երկար քաղաածքը պատուիրակութեան Սէյմին ներկայացրած գեղուցումից, որպէսզի ցոյց տամ այն սխալ և կեղծ գիրքը, որի վրայ կանգնեց մեր պատուիրակութիւնը բանակցութիւնների հէնց սկզբից: Ոչ ոք, ոչ երկրի գեմոկրատական օրգանները, ոչ կառավարութիւնը և ոչ էլ Սէյմը նրան լիազօրութիւն ամենևին չէր տւել ներկայացնելու Անդրկովկասը որպէս Ռուսաստանից արդէն անջատւած, անկախ մի պետութիւն և որպէս անկախ պետութեան կողմից բանակցելու, քանի որ այդպիսի անջատումն Ռուսաստանից տեղի չէր ունենցել: Կրկնում եմ, այդպիսի յայտարարութիւն անելու և այդ ուղղութեամբ գործելու նա ոչ մի իրաւունք չունէր. դա մի արարք էր, որ, իմ կարծիքով, այլ կերպ որակել կարելի չէ, բայց միայն պետական-քաղաքական դաւաճանութիւն խօսքով:

Հենց այդ հարցի մէջ, Րաուֆ բէյը մեր «հանձարեղ» գիւղումատների օձիքից պինդ բռնելով բաց չէ թողնում մինչև վերջը:

Անկախութեան հարցը դառնում է այնուհետև կօնֆերենցիայի նիստերին կարծեա միջնադարեան թիւղաստիկական վիճաբանութիւնների մի առարկայ, հենց այնպէս ինչպէս միջին դարերում սուրբ հայրերի մէջ տեղի էին ունենում անվերջ վիճաբանութիւններ սուրբ երրորդութեան կամ սուրբ հոգու էութեան մասին:

Տաճկական պատուիրակութիւնը պնդում է և հաստատում, որ պետութիւններից ճանաչւած չլինելով՝ Անդրկովկասը չի ներկայացնում իրենից որպէս մի անկախ պետութիւն. Անդրկ. կառավարութիւնը իր Թիւրքիային ուղղած յունւարի 23-ի հեռագրում հաղորդում էր, որ նախքան հաշտութեան բանակցութիւնների մէջ մտնելը, նա (Անդրկ. կառավարութիւնը) պէտք է համաձայնութեան դար այդ մասին Ռուսաստանի հանրապետութիւնը կազմող աւտոնոմ պետութիւնների հետ, հետևապէս նա իրան համարում էր ոչ անկախ որպէս Ռուսաստանի Ֆեդերատիւ հանրապետութեան մի անդամ. Բրեստ-Լիտովսկի ներկայացուցիչներ չուղարկելը այլ բան չէր ապացուցանում, իսկ մինչև վերջերս էլ Անդրկովկասի ճակատներում սահմանները պաշտպանում էին բացառապէս ռուսական զօրքերը:

Ինչ և ինչպէս է աւարկում յիշեալ արգումենտներին մեր պատուիրակութիւնը: Ճշմարիտ է, պատասխանում է նա, ձեռեմտորէն Անդրկովկասը անկախ չէ յայտարարւած, բայց փաստօրէն նա անկախ պետութիւն է իրանից ներկայացնում: Չէ որ հենց ինքը Թիւրքիան էլ իր յունւարի 1-ի Անդրկ. կառավարութեան ուղղած հեռագրում Անդրկովկասը անւանում էր անկախ: Ի հարկէ, հաշտութեան դաշնագրի քառֆիկայիցիայի ժամանակ անկախ Անդրկովկասի պետութիւնը կը կատարէ այն բոլոր ձևականութիւնները, որ պահանջում է միջազգային իրաւունքը: Հետևապէս պէտք է քննութեան առնւէին ոչ թէ այդ ձևական խնդիրները, այլ այն կոնկրետ առաջարկները որոնք Անդրկովկասի և Թիւրքիայի մէջ կայուն հաշտութիւն կնքելու հիմք են ծառայելու:

Բառաֆ բէյը ոչ մի գոհացում չէ ստանում. տաճիկ պատերազմութիւնը սկսում է հետզհետէ աւելի կատեգորիկ լինել նա յայտնում է իր ցանկութիւնը, որ Անդրկովկասը վճռականապէս յայտարարէ իր անկախութիւնը և իր վարչական ձևը նախ քան որ սկըսած բանակցութիւնները կընդունեն վերջնական բնաւորութիւն:

Այդ ժամանակ միայն, երբ բանը բանից արդէն անցել էր, իրենց կեղծ ու պատիր գործելակերպով „յօնքը շինելու տեղ արդէն աչքն էին հասնել“, մեր Չխենկելիներն առաջարկում են տաճիկներին Մէյմի որոշումները (կոնֆերենցիայի 5-րդ նախավերջին նիստին), որոնցից մանաւանդ Արեւելեան Անատոլիայի ինքնորոշման կէտը սաստիկ բարձր առաջ բերեց տաճիկների մէջ, որուք դաճում էին, որ դա ոչ այլ ինչ էր նշանակում, բայց միայն խառնել թիւրքիայի ներքին գործերի մէջ. տաճիկ պատերազմութիւնը այդ օրը արդէն (մարտի 8-ին) վճռականապէս յայտնում է, որ Անդրկ, հանրապետութիւնը վերջնականապէս և և պաշտօնապէս կը ճանաչէր միայն երկու կողմերի մէջ կնքած դաշնագրում ընդունած յատուկ մի պայմանի հիման վրայ և թէ բանակցութիւնները կարող են շարունակել միայն այն դէպքում, երբ Անդրկովկասը կը հրաժարւի Բաթումի, Արդահանի և Ղարսի սանգօթակների նկատմամբ որեւէ յաւակնութիւնից:

Այս կատեգորիկ պահանջը առաջ բերեց տամերկու օրւայ ընդմիջում, որի ընթացքում մեր պատերազմութեան մի մասը վերադարձաւ Թիֆլիս նոր հրահանգներ ստանալու:

Մէյմը իր մարտի 13-ի նիստում որոշեց արտակարգ լիազօրութիւններով օժտել պատերազմութեան

նախագահ Չխենկելուն. միւս անդամները այդ լիազօրութիւններին հիման վրայ դաճում էին սոսի խորհրդապետներ և... հանդիսատեսներ:

Կոնֆերենցիայի մարտի 23-ի 6-րդ և վերջին նիստում յայտարարեց տաճիկներին, որ Անդրկ. կառավարութիւնը համաձայնում է նրանց գիշել ամբողջ Օլթիի շրջանը, Արդահանի հարաւային մասը, Ղարսի շրջանի հարաւարեւմտեան և հարկւանի շրջանի արեւմտեան մասերը:

Մակայն, չնայելով այս բանին, հեռեւալ օրը մայիսի 24-ին, երեկ. ժամը 7-ին ստացում է օտտոմանեան կայսերական կառավարութեան ուլտիմատումը-տալ նրան վերջնական պատասխանը Թիւրքիայի յայտարարած պահանջների աւելի 48 ժամայ ընթացքում:

Մարտի 25-ին Չխենկելին հեռագրում է այդ մասին Թիֆլիս, որտեղից պատասխան է ստացում տաճիկներին մաքսիմալ գիշումներ անելու մտքով: Մարտի 26-ին Չխենկելին նորից հեռագրով յայտնում է Անդրկ. կառավարութեան Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ընդունելու անխուսափելի անհրաժեշտութեան մասին: Ուլտիմատումի ժամանակը լրացած լինելով և չստանալով Թիֆլիսից պատասխանի, Չխենկելին գրաւոր կերպով հաղորդում է տաճիկ պատերազմութեան, որ Բրեստի դաշնագիրը ընդունւում է Անդրկ. պատերազմութեան կողմից, և միևնոյն ժամանակ առաջարկում նրա վրայ հիմնելով շարունակել բանակցութիւնները:

Բայց որպէսզի կտրելի լինի շարունակել բանակցութիւնները, Բառաֆ բէյը պահանջում է, որ Անդրկովկասը նախ և առաջ յայտարարէ իր անկախութիւնը, որով հնարաւոր կլինի միայն գրաւել դաշնա-

կիցնեբրին «բարեկամական» կայուն հաշուութիւն կըն-
քելու համար:

Մի անգամ արդէն անելանելի ռատայնի մէջ
ընկնելով շնորհիւ այն յանցաւոր արամադրութեան և
նախախնայի, որի մասին վերև յիշեց, պատիրակու-
թեան նախագահ Շխնկկելին թոյլ է տալիս իբան
այնպիսի գործողութիւններ, որոնց համար պէտք էր
միայն անարգ սխնին գամել նրան: Այսպէս օրինակ
նա, առանց որեէ լիազօրութիւն ունենալու, Տրապի-
զոնից հռոնգիւ է ուղարկում Բաթում բնրգապետին
առանց դիմադրութեան անձնապարհ լինել և քաղաքն
յան ներս տաճիկներին: Այդպէս էլ լինում է մեր գօր-
քերը՝ յիստ են քաշում և սպրիլի 4-ին տաճիկները
200 ասկեարներով զբաւում են քաղաքը:

Սէյմը իր հարստի 31-ի նիստում որոշում է ան-
յապաղ յետ կոնչել պատիրակութիւնը Տրապիզոնից,
քանի որ անձնաբին եղաւ համաձայնութիւնը երկու
կողմից մէջ գահմանների հարցի վերաբերմամբ:
Պատիրակութիւնը սպրիլի 1-ին Տրապիզոնից ճանա-
պարհ է ընկնում դէպի Քիֆլիզ:

Այդպէս վերջացաւ Տրապիզոնի կոնֆերենցիա
կոչւած արագի-կոմեդիան. աւելի ճիշտը կա զեռ չը
վերջափու նրա վերջին գործողութիւնը մենք կտես-
նենք Բաթումում:

Մտաւոր մտան յոյններն իրարմար զմեզ
գնահատելու համար զանազան յարցերով
միմեկին զնոյն յարցերով զնոյն յարցերով
Սպասուած իմացում էր իմացում իմացում
IV

Պատմութիւնը ցոյց կը տայ ապագայում թէ
ինչպէս մեր պատիրակութիւնը Տրապիզոնում և Բա-
թումում իր յանցաւոր ապախիւայով իր հակապետա-
կան գործողութիւններով աւելի ևս ջիւղացրեց այն
վիճը, որի մէջ թաւալազուր էր լինում մեր երկիրը
և թէ ընդհանրապէս Ռուսաստանը:

Ահա այն պիտաւոր փաստերը, որոնք սև բիծ են
կազմում նրա գործունէութեան մէջ.

1. Անդրկովկասը Ռուսաստանից քաղաքականա-
պէս դեռ ևս անջատւած չլինելով, դեռ ևս Ռուսաստա-
նից բաժանւած անկախ մի պետութիւն չկազմելով՝
մեր պատիրակութիւնը տաճիկների հետ բանակցելու
հենց առաջին օրից հանդէս է գալիս որպէս ներկա-
յացօցչութիւն Անդրկովկասեան անկախ պետութեան
կողմից և այդ հիման վրայ միայն վարում իր բանակ-
ցութիւնները, մի բան, որը համար նա ոչ մի իրա-
ւունք չունէր, ոչօրից նա այդ մտքով լիազօրութիւն
չէր ստացեր, ինչպէս այդ մասին արդէն վերև յիշեցի:

2. Նա հենց սկզբից դիմոկրատիայի կենտրոնա-
կան օրգանների, կառավարութեան, Սէյմի կամըր,
ցուցմունքները և որոշումները մի կողմը ծալեց. մինչ-
դեռ նա իր մտավախութեան, քաղաքագիտական արտի-
կարութեան և յանցաւոր հակումների և տրամադրու-
թիւնների շնորհիւ զիջումների ճամբան բռնելով՝ թոյլ
տուեց իրան վերջը ինքնագլուխ Բրեստ-Լիտովսկի
դաշնագիրն ընդունել, որը բոլորովին նրա իրաւասու-
թիւնից զուրս էր:

3. Այդ դաշնագրի ընդունելու մասին պարոն Չխենկելին պատերազմական համաձայնութեամբ պրաւոր հաղորդում է տաճիկներին առանց այդ մասին հրահանգ ստացած լինելու և թէ նոյնիսկ պատասխան սպասելու Սէյմից և կառավարութիւնից:

4. Պատերազմական նախագահ Ակակի Իւանովիչ Չխենկելին, որը արտակարգ լիազօրութիւններով էր օժտւած ոչ թէ իրան թոյլ տալու համար դաւածանական քայլեր, այլ ինչպէս ասուած էր նրան տւած հրահանգում շինքներոյն անհրաժեշտ քայլեր անելու երկու կողմերի համար ընդունելի պատուաւոր հաշտութիւն կնքելու ուղղութեամբ՝ նախագահ պարոն Չխենկելին, ասում ենք, ինքնավուր հեռազրական կարգադրութիւն է անում Տրապիզոնից առանց կուր Բաթումը յանձնելու տաճիկներին, որի հետևանքը լինում է այն, որ տաճիկները, 200 ասկեարներով գրաւում են քաղաքը:

5. Ինչպէս կտեսնենք փոքր ինչ յետոյ, Բաթումում տաճիկները մայիսի 13-ին ուլտիմատում են ներկայացնում մեր պատերազմական Ալէքսանդրապօլի և երկաթուղու գծի գրաւման մասին:

Ոչ Չխենկելին և ոչ էլ պատերազմական որևէ այլ անդամ հարկ չէ համարում ժամ առաջ հաղորդելու Ալէքսանդրապօլի իշխանութիւններին այդ վերահաս օտակալի վտանգի մասին:

Մրանք պետական դաւածանութեան ընոյթ կրող այնպիսի գործողութիւններ են, որոնց համար հեղինակները որպէս պետական յանցաւորներ սովորաբար զինուորական դատի են ենթարկուում:

Եթէ անլացնենք այս բոլորին մուսաւաթիստ և թուրք պատերազմների թիւրքօֆիլ տրամադրութիւնը և քաղաքական աջակցութիւնը Թիւրքիային, ինչպէս

նաև մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն, բացի նաց. դեմ. Վեշապելիների՝ պատերազմական խազար Չխենկելու յաճախակի մտերմական յարաբերութիւնները Մաղալով, Կերեօկլիզէ, Սուրգուլովզէ քաղաքական շանտաժիստներից և սրիկաներից բողկացած յայտնի դաւածան խմբակի այս կամ այն ներկայացուցչի հետ, խմբակ, որը դեռ համալրարհայի՞ն պատերազմի առաջին ամիսներից վաճառւած Գերմանիային և Թիւրքիային յաջողեցրել էր «Վրտառանի անկախութեան» պայմանով դաշնագիր կազել Գերմանիայի հետ ընդգէմ Ռուսաստանի, ապա ուրեմն մեր Շրիպլումատ, պատերազմների մասոյ պատկերը անելի ևս ուլլիեֆի կնքելու այ հասարակութեան առաջ:

Տրապիզոնից վերադառնալուէ զէս պատերազմները սկսեցին «գործի» դիմել: Չխենկելին իր համաձայնների հետ սկսեց կառավարչական, կուսակցական և այլ ժողովներում եռանդուն կերպով պաշտպանել իր և պատերազմական Տրապիզոնում ընդունած գործելակերպը, որը ոչ այլ ինչ էր, բայց միայն Գերմանո-տաճիկական իմպերիալիզմի շահերի կամայ թէ ակամայ պաշտպանութիւն:

Չխենկելուն յաջողուած է իր կողմը գրաւել կուսակցական և քաղաքական շրջաններում գործողներից շատ շատերին:

Վերջին 2—3 ամիսների ընթացքում Անդրկովկասեան սոցիալդեմոկրատիայի վրացական շրջաններում Չխենկելու հասանքը սկսել էր նաւաճուանք անել: Այդ ազգայնական քաղաքական հասանքը, որը երբեմն անցիալում անելի կամ նաւաջ չափով արտայայտուել է սոցիալդեմոկրատիայի վրացական աջ թեի օգտորախնիստական խաւերում, անելի ուժեղանալով սանդուած նպաստաւոր հանգամանքներում պաշտուում է շատ

շատերին, ինչպէս նաև կուսակցական մասաներին: Գերմանական օրիէնթապիան նոյնիսկ կողմնակիցներ էր գտնում, ոմանք բացարձակ յայտնում էին իրենց համակրութիւնը և թերւում դէպի այդ կողմը: Մեր հայ Չխենկելիները շրջաններում գրեթէ նոյն կրեոյթներն են նկատում:

Պարզում է, որ Տրապիզոնի պատւիրակութեան հայ անդամները Քաջազնունին և Սատրսեանը նոյն տրեւիկան են հետապնդել և նոյն գիրքը բռնել Տրապիզոնում, ինչ որ Չխենկելին: Նրանք համաձայնել են Չխենկելու հետ Բրէստ-Լիտովսկի դաշնագրի ընդունելուն: Իսկ նախքան այդ՝ պ. Քաջազնունին շուրջ էր իր համաձայնութիւնը Չխենկելուն գիջելու ծայրայեղ դէպքում Թիւրքերին Նարսը և պահելու Բաթում*):

Յիշեալ հայ պատւիրակներն ևս հասարակական, քաղաքական-կուսակցական խորհրդակցութիւնների մէջ պնդում էին անհրաժեշտօրէն ընդունել տաճիկների հաշտութեան պայմանները, գտնելով որ հաշտութիւնից դուրս ուրիշ ելք չկայ: Յայտնի է թէ ինչպէս այդ օրերին Ալէքսանդրապօլում կայացած խորհրդակցութեան մէջ, որին մասնակցում էին Սէյմի հայ անդամները, բոլոր քաղաքական կուսակցութիւնները ներկայացուցիչները և բազմաթիւ հասարակական դործիչներ, պատւիրակ պ. Քաջազնունին շեշտանում կերպով աշխատում էր համոզել որ անհրաժեշտ է յանձնել տաճիկներին Նարսը և Բաթումը**): Չնայելով այդ բանին, խորհրդակցութիւնը որոշում է չգիջել ոչ մի կերպ Նարսը և Բաթումը և այդ մտքով մանգաս է արւում Քաջազնունուն և Սատրսեանին:

*) Տես Գնունու յօդածը «Կայծ»-ի № 2-ում:
 **) ibid.

Հասարակական-քաղաքական միջոցառումը ժամ ժամի, օր, օրի վրայ մալլում էր, դրութիւնը վերին աստիճանի ծանր և անտանելի էր դառնում. քաղաքական գործիչներին հողերանական դրութիւնը և տրամադրութիւնը ուղղակի արգահատելի էր. նրանք փոխւում էին բամէլէօնի պէս: Եսայ յայտնի մարդիկ և գործիչներ փոքրագութեան և ստորութեան ապրիցուցիչ ապացոյցները էին տալիս:

Սկզբում Սերեթիւնի և Ժորդանիան մարտնչաւ էին Չխենկելու և նրա համախոհների դէմ կուսակցական և այլ ժողովներում, բայց շուտով նրանք իրանց ֆրօնաբ գոխեցին:

Սասնձին չիացմունքով կարելի էր օրինակ լսել Ժորդանիային ապրիլի 7-ի երեկոյեան կուսակցական բազմամարդ ժողովում*), ուր նա խիստ յարձակողական ոճով պախարակում էր Չխենկելուն և նրա կատարած քայլերը: «Ընդ յանձնեցիք և ոչ այլ ոչ Բաթումը տաճիկներին» ասում էր նա վրդովւած Չխենկելուն: Այդ ժողովը ձայների մեծամասնութեամբ մերժում է Չխենկելու թեկնածութիւնը պրեմիերութեան համար:

Սակայն Չխենկելին, Բամիշիւնին, Գարջկիւսձէին և tufti guanti շարունակում են նախանձելի եղանակով իրանց գործը:

Հեռակալ օրը ապրիլի 8-ին տեղի է ունենում վրաց Ազգային Ժողովի նիստը, որտեղ, ինչպէս և պէտք էր սպասել, ընդունւում է ձայների մեծամասնութեամբ Անդրկովկասի անկախութիւնը յայտարարելու որոշում:

*) Այդ երեկոյ հրաւիրւած էր ս.-դ. Շրջանային, Թիֆլիսի կոմիտէների և Վերահսկիչ կոմիտայի խառը ժողով:

րկու և նոր կարիսնետ կազմելու համար Չխենկելուն յանձնելու որոշումը:

Ապրիլի 9-ի առաւօտը ժամի 10-ին նշանակած առ-դ. շրջանային կոմիտէի նիստին նոյն հարցերն են դրւած, ինչ որ ապրիլի 7-ի կուսակցական խառը ժողովում. այստեղ արդէն նոյն ժորդանիան ուղիղ 24 ժամից յետոյ բոլորովին այլ վերաբերմունք է ցոյց առիւն դէպի Չխենկելին և համաձայնում է նրա թեկնածութեան պրեմիէրութեան համար: Ինչ պատահեց նրա հետ 24 ժամայ ընթացքում, Առաւած միայն գրեմէ:

Տողերիս գրողը առաքելում է եռանդուն կերպով նման ապօրինի և հակակուսակցական գործողութեան գէմ, այսինքն որ ուղիղ 24 ժամ առջ կուսակցական ակտի բազմամարդ ժողովում միանգամ արդէն նոյն հարցերի որոշումն է կայացել, մինչդեռ այժմ նորից շրջանային կոմիտէի ակտի փոքրաթիւ ժողովում, ուր անդամների գրեթէ կէսը բացառեալ էին, նոյն հարցերի բոլորովին այլ որոշումն էին կամենում աւել:

Ժողովը այնուամենայնիւ խախտելով ապրիլի 7-ի որոշումները, ընդունում է 8 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 1-ի և 1 ձեռնադահի, վրայ Աղգային ժողովի յիշեալ որոշումները *):

*) Իհարկէ ժորդանիան եւ առիւն է իր քւէն Չխենկելուն:

Չնայելով, որ այդ քաղաքական գործիչը լայն ժողովրդականութիւն և հոշակ է վայելում, սակայն, հարկ եմ համարում յայտնել, որ իմ ակտի քան 20 ամեայ ծանօթութիւնը նրա և նրա գործունէութեան հետ, հաստատուն հիմք է առիւն ինձ ունենալու ոչ այն նպատակով կարծիքը ինչ որ ունեն շատերը նրա մասին:

Այլևս կասեալ չկար այն մասին, որ Չխենկելու հոտանքը տանելու էր յողթանակը. բոլոր հանգամանքները դասաւորում էին նրա օգտին: Այս յողթանակը նշանակում էր միայն Մուսաւաթի և Գերմանո-առնկական իմպերիալիզմի ծրագրի յողթանակը:

Գեգեչկորին իր կարիսնետով արդէն հրաժարեալ էր ակտի: Ապրիլի 9-ին երեկոյան կայացաւ Սէյմի նիստը. ձայների տեսքին մեծամասնութեան որոշումով Սէյմը յայտարարում է Անդրկովկասի անկախութիւնը և յանձնարարում է Չխենկելուն նոր կառավարութիւն կազմել: Օվացիաներով և ծափերով ընդունեց այդ որոշումը՝ նորակնունք պրեմիէր Չխենկելու ղեկավարցիան:

Հակայեղափոխութեան և նացիոնալիզմի վախճանալիայի հանդիսաւոր օրն էր ապրիլի 9-ի օրը, որը իր կատարեալ լրացումը կատանայ մայիսի 26-ին:

Պարոն Զխենկելին իշխանութեան գլուխ անցնելով և կազմելով կօալիցիոն կառավարութիւն, որի մէջ մտան, իհարկէ, գլխաւորապէս նրա տակախիւյի կողմնակիցները և հասախոհները, սկսում է հռանդով կիրառել իր քաղաքական ծրագիրը: Նա այժմ, արդէն իշխանութիւնը բացարձակապէս իր ձեռքին՝ թոյլ է տալիս իրան աւելի յանդուգն ու խիզախօրէն շարունակել այն, ինչ որ սկսել էր Տրապիզոնում. ուրիշ կերպ չէր էլ կարող լինել. նա չափազանց հետևողական էր քաղաքական գիպլոմատական «ազնութեան» մէջ, որ ընդունակ լինէր այլապէս վարելու: Հինց առաջին օրը, նա, գաղտնի, առանց կառավարութեան միւս անդամների գիտութեան, հեռագրում է Ղարս զինւորական իշխանութիւններին Տրապիզոնում իր աւած «ազնիւ» խոստումների համաձայն, յանձնել քաղաքը իր ամբողջ շքանով ոտածիկներին:

Գիներալ Նազարբեգովը անցեալ 1918 թւականի աշնանը Թիֆլիսի Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի շէնքում հաղորդեց քաղմաթիւ վկաների ներկայութեամբ, որ Ղարսի անձնատուր լինելը տաճիկներին տեղի ունեցաւ ոչ թէ որպէս հետևանք Զխենկելու կարգադրութեան, որին նա ինքը Նազարբեգովը

խոհներէ յետեից, ընդգրկեցին Զխենկելու քաղաքական նացիոնալիստական գործելակերպը. այլ կերպ չէր կարող էլ լինել, քանի որ նրանք նացիոնալիստներ էին:

Թէ ինչպէս կարելի է կուսակցական կրօնից կուրացած զբաղարան հակաակրոններին, աղաւաղել պատմութիւնը, դէպքերն ու փաստերը ասկ ու գլուխ անել, զրա լուսագոյն կոնկրետ նմուշը ներկայացնում է Վրացեանի շարադրած «քաղաքական տեսութիւնը» «Զանգի» № 1 և 2-ում:

V

Պատմական իրողութիւն է արդէն, որ ապրիլի 9-ին Սեյմում Անդրկովկասի անկախութեան և Զխենկելու թեկնածութեան օգտին ձայն աւելն սոցիալ-դեմոկրատների մեծ մասը, վրացի էսէրները, դաշնակցականները, իսկ թուրք անդամների և մուսուլմանների մասին էլ խօսք լինել չէ կարող: Սեյմի դահլիճից դուրս էին դնացել և ներկայ չէին քէարկուլեան Ժամանակ ուռա, հայ և 2-3 վրացի ս. դ. անդամները, որոնց համար անախորժ էր ներկայ լինել մեր երկրի միջազգային յեղափոխական ղեմակերտության պարտութեան այդ սզահանդէսին:

Հայ, ուռա և հրէայ սոցիալ-դեմոկրատները շատ չնչին բացառութեամբ դէմ են եղել կուսակցութեան մէջ Անդրկովկասի անկախութեան յայտարարութեան և վբացի և հայ չխենկելիներէ քաղաքական գիրքին և գործելակերպին*):

*) Պարոն Վրացեանը զբաղարարում է, երբ նա գրում է «Զանգ»-ում (№ 1) որ «հայ սոցիալ-դեմոկրատները միշտ եղել են վրաց մենչիկիների կամակատարը»: Ընդհակառակը հայ սոցիալ-դեմոկրատները ընդհանրապէս կուսակցական և քաղաքական կեանքում միշտ կանդնած են եղել ինտերնացիոնալի հողի վրայ: Զհայ և չէ եղել և ոչ մի հայ սոցիալ-դեմոկրատ, որ ամբողջապէս յարէր Զխենկելու հոսանքին. մինչդեռ անհերքելի փաստ է, որ դաշնակցութեան լիզեր Գալաշազնուները և այլ ներկայացուցիչները համակերպւեցին և դնացին Զխենկելու և նրա համա-

կարող էր և չենթարկել (գեներալի բառացի խօսքերը), այլ գլխավորապէս շնորհիւ զօրքերի լքման, որը գեներալի ասելով այն աստիճանի էր հասել, որ Ղարսում այդ միջոցին գտնուող 5000 զօրքից չեացել էր մինչև Ալէքսանդրապոլ հասնելը միայն 2000: Գեներալը կարող էր իհարկէ կաթարած դէպքին պատճառակամ մամն մեկնութիւն տալ, որի հաւանականութիւնը մենք ոչ ժխտել կարող ենք և ոչ էլ ներկայումս ստուգել: Բայց և այնպէս զօրքի լքումն ու զառաջուրութիւնը չէ կարող հարկաւ մեղմացուցիչ կամ արդարացուցիչ հանգամանք լինել Չխենկելու կարգադրութեան նկատմամբ, որովհետև, պարզ է, որ ստեղծւած պայմաններում «լքեալ՝ զօրքի հրամանատար գեներալի թերեւ արդէն «լքեալ» տրամադրութեան վրայ չէր կարող այս կամ այն չափով ազդեցութիւն չգործել երկրի կառավարութեան տեղի նման կարգադրութիւնը:

Ղարսը իրօք զառարկեց, զօրքը յետ նահանջեց դէպի Ալէքսանդրապոլ և տաճիկները գրուեցին այդ քաղաքը աղբիւրի 13-ին:

Այդպիսով Բաթումի ընկնելուց գրեթէ ասո օր յետոյ ընկնում է և Ղարսը:

Բաթումի, Ղարսի և Արդահանի շրջանները գրբաւում են տաճիկներից գրեթէ ասանց դիմադրութեան շատ կարճ ժամանակամիջոցում, մի գրբաւում, որը սրբագործւում է Չխենկելու և նրա համախոհների բարեհաճ համաձայնութեամբ, առանց նախքան դաշնագրի բառիֆրկացիայի երկու կողմերից:

Այս «խաղաղասիրութեան» ու «բարեացակամութեան» հաւաստիքները տալուց յետոյ տաճիկներին, մեր քաղաքականութեան ղեկավարները աւելի եռանդով շարունակում են այդ ուղղութեամբ իրանց գոր-

ծունէութիւնը: Նոյն Չխենկելու նախագահութեամբ և Քաջազնունու, Խատիսեանի և այլ նմանների մասնակցութեամբ կազմւում է մի նոր պատերազմութիւն, որը մայիսի 5-ին ուղեորւում է այս անգամ արդէն Բաթում:

Մինչ Բաթումում «հաշտարար» կոնֆերենցիայի վերջնական սև աշխատանքներն էին կատարւում վերացի և հայ Չխենկելիներին, մուսուլմանների, տաճիկ Խալիլ փաշաների և գերմանացի Ֆոն-Լոստֆներին մէջ, տեղի է ունենում մայիսի 15-ն Ալէքսանդրապոլի «անակնկալ» ոմբակոծումը և ապա շուտով քաղաքի և երկաթուղու գրբաւումը:

Պարզւում է, որ Բաթումում տաճիկները չբաւակոնանալով Բրէստ-Լիտովսկի դաշնագրի սահմաններով՝ մայիսի 13-ին ուլտիմատում են ներկայացնում մեր պատերազմութեան Ալէքսանդրապոլի և երկաթուղու գծի գրբաւման մասին: Ոչ Չխենկելին, ոչ Քաջազնունին և Խատիսեանը նոյնիսկ կարեւոր չեն համարել այդ ուլտիմատումի մասին ժամ և օր առաջ ամենաշատ կերպով հաղորդելով նախազգուշացնելու Ալէքսանդրապոլի իշխանութիւններին սպառնացող սակալի վտանգի դէմ միջոցներ ձեռք առնելու համար: Դա ապացուցանում է միայն այն թէ որքան նրանք «արթուն», «բարեխիղճ» և «սրտացաւ» են եղել ընդհանրապէս մեր երկրի ժողովրդներին և մասնաւորապէս հայ ժողովրդի վերաբերմամբ:

Ալէքսանդրապոլի և երկաթուղագծի գրբաւումը բացում էր տաճիկների առաջ մեր երկրի ձանապարները բոլոր ուղղութիւններով. հասկանալի է այդ պատճառով այն մեծ շփոթը և յուզմունքը, որ այդ «անակնկալ» նոր աղէտաբեր դէպքը առաջ բերեց մեր

երկրի զանազան հասարակական շրջաններում և առանկապէս հայերի մէջ:

Ինչպէս արդէն ասացի, Բաթումում պէտք է կատարէր Տրապիզոնի տրագի-կոմիդիայի վերջին գործողութիւնը: Տրապիզոնում տւած խոստումները պէտք է քատիֆիկացիայի ենթարկէին Բաթումում:

Այստեղ, սակայն, ոչ թէ միայն Անդրկովկասի անկախութիւնը, Բրեստ-Լիտովսկի դաշնագիրն է ընդունուած և բոստիֆիկացիայի ենթարկուած, այլ «յանուն ազգերի համերաշխութեան» կատարուած է մի չափանուած քաղաքական առևտրական շահաժ, երկրի մի անողորմ անդամահատութիւն (վիվիսեկցիա) և բաժանութիւն, որի պատճենները դեռ մինչև այսօր վայելում են անխաբի մեր երկրի բոլոր ժողովուրդները:

Յիշատակելու արժանի է, որ հայ պատերազմի Բաշազունին և Սատիսեանը այդ աճուրդի ժամանակ համաձայնութեան գալով Ադրբէյջանի թուրք մարդակեր ֆէոդալների հետ՝ գիշում են նրանց Լարաբադը, որը ընդունուած է որպէս Ադրբէյջանին կցւած մի երկիր:

Անդրկովկասի կառավարութեան պատերազմութեան հետ միաժամանակ տաճիկ ազնիւները և մուսաւաթիստների զրգումներով և ղեկավարութեամբ Բաթում են գնում բազմաթիւ թուրք ղեկեղացիաներ (բեզական տարրերից կազմւած իհարկէ) մեր երկրի թուրքական գաւառներից, որոնք ներկայանալով օտտոմանեան պատերազմութեան՝ միաբերան խնդրում են թուրքական գաւառների կցումը Թիւրքիային և հպատակութիւնը Սուլթանի պետութեան:

Գերմանո-տաճկական իմպերիալիզմի ծրագրերը, ինչպէս տեսնում էք, հրաշալի կերպով վաւերացուած

է Բաթումում և իրականացուած մեր երկրում: Այդ ամենագրեթե իմպերիալիզմին անհրաժեշտ էր ոչ թէ միայն Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և Անդրկովկասի անկախութիւնը, այլ և ամբողջ երկրի անդամահատութիւնը և մանր, միմեանց թշնամի տերրիտորեալ պետութիւնների վերածումը իր տիրապետութիւնը և իմպերիալիստական հեղեմոնիան մեր երկրում Կոստանտնուլու և յաւերժացնելու նպատակներով:

Այդ ծրագրի ծայրայեղ ձգտումները և պահանջները իհարկէ ձեռնտու չէին կարող լինել նոյնիսկ նացիոնալիստներին, նրանցից թէկուզ ամենազէակցիօն մուսաւաթիստներին, բայց որ նրանց բոլոր տրամադրութիւնը, նրանց բոլոր քաղաքական քայլերը և զործեկակերպը ընդառաջ էին գնում յիշեալ իմպերիալիզմի ծրագրային նպատակների իրականացման մեր երկրում, դրանում ոչ մի կասկած չէ կարող լինել: Մենք առանձնապէս պնդում ենք, որ վրաց, հայ և մանաւանդ թուրք նացիոնալիզմի տենչերին և պահանջներին, նրանց կենտրոնախոյս քաղաքականութեան ձգտումների որոշ չափով կեանքում կիրառւելուն բաւարարութիւն էր տալիս գերմանո-թիւրքական ծրագրերը: Տերրիտորիաների բաժանման և նրանցից շուկ շուկ մանր տերրիտորեալ ազգային պետութիւններ հիմնելու փափազն ու ձգտումը առանձնապէս նկատելի էին զարձեղ մանաւանդ վերջին ամիսներին նացիոնալիստական շրջաններում: Ահա թէ ինչու մեր երկրի որոշ նացիոնալիստական էլիմենտները չէին կարող չողջունել մեր երկրի բաժանումը զանազան ազգային տերրիտորիալ անկախ պետութիւնների, բաժանում, որ գերմանո-տաճկական ծրագրով թելադրուած էր մեր երկրին:

Բացի ուրեմն, արտակարգ հանգամանքների

դժբաղդ դաստորութիւնս և արտա-
լադրանքն ու ճնշումը, ևր նացիրոնալիտտական քա-
ղաքական խմբակցութիւնների տրամադրութիւնը և
կամեցողութիւնը նոյնպէս մեծ դեր խաղաց, այնպէս
որ եթէ այդ տրամադրութիւնը և կամեցողութիւնը
չլինէր, հաւանօրէն իրերը այն ծայրայեղ պէտաւրի և
դժբաղդ ընթացքը չստանային, ինչպիսի ընթացք նը-
բանք ստացան անցեալ 1918 թւին մեր երկրում:

Երբ տեղի ունեցաւ Ալէքսանդրապօլի ուժակո-
ծումը և դրաւումը, մեր մի քանի քաղաքական գոր-
ծիչները անմիջապէս շտապեցին Թիֆլիսից Բաթում
իրազեկ լինելու թէ ինչ է այնտեղ կատարուում: Մի
քանի օրից յետոյ վերադարձան նրանք Թիֆլիս:

Մայիսի 25-ին էր թէ 26-ին, լաւ չենք յիշում,
տեղի ունեցաւ առաւօտեան քաղաքային դումայի
գահլիճում ս. գ. կոնֆերենցիա Ժորգանիայի նախա-
գահութեամբ:

Շատերը համոզւած էին, որ արդէն կանխածը-
սածւած և կանխորոշւած էր Սէյմի լուծման և Վրաս-
տանի անկախութիւնն յայտարարելու հարցը: Ահա
այդ հարցն էր զբւած կօնֆերենցիայի քննութեան:

Տեղի ունեցան տաք վիճարանութիւններ:

Մերեթելու կործիրով երկրի քաղաքական կեան-
քի միութիւնը արդէն լուծւած պէտք էր համարել,
սւրիշ ելք չկար, ծանր, անտանելի դրութիւնը հար-
կադրում էր յայտարարել Վրաստանի անկախութիւնը
և ընդունել Գերմանիայի հովանաւորութիւնը: Իհարկէ
գերմանական իմպերիալիզմից աւելի գերազասելի
անգլիականը, բայց նա ներկայումս հեռու է, անմիջա-
կան օգնութիւն սպասել նրանից անհնարին էր:

Ժորգանիան եռանդով պաշտպտնում է Վրաստա-
նի անկախութեան հարցը: Բաթումից նոր վերադար-
ձած լինելով տալիս է նոր տեղեկութիւններ և յայտ-

նում նոյնիսկ առանձին գոհունակութեամբ. որ Շխեն-
կելին մեծ համարում էր վայելում առեկէներբի և
գերմանացիների կողմից և որ նրանք առանձնապէս
ունկնդիր են նրան^{*)}: Ծշմարթա է, շարունակում է
նա, մեր երկրի ժողովուրդների մէջ աւելի ժողովար
վիճակ է սպասում հայ ժողովրդին, բայց մեզ վրայ
չէ կարող ընկնել այդ բանի պատասխանատուութիւնը,
այլ այն կուսակցութեան վրայ (այսինքն դաշնակցու-
թեան. Գ. Լորաջ.) որի ձեռքում է եղել հայ ժողո-
վրդի բաղդը:

„Моя хата съ краю“, ահա թէ ինչ էր ուզում
ասել Ժորգանիան, մեզ ինչ, թէ միւս ժողովուրդնե-
րին ինչ կարող է պատահել, միայն թէ սեփական
ժողովուրդս լաւ և ապահովւած լինի. ինչ քոյթ թէ
այն միջոցները, որոնք ես գործադրում եմ իմ ժողո-
վրդի գոյութեան և կեանքի ապահովութեան համար,
կարող են կործանարար և մահարեք լինել միւս ճա-
րան ժողովրդի կամ ժողովուրդների համար:

Ահա Ժորգանիայի ողորմելի դատողութեան իս-
կական իմաստը: Դա մի խօսք էր, մի մասնակցերով,
որ յատուկ կարող էր լինել միայն նացիրոնալիտտին
pur sang և ոչ ամենեւին դեմոկրատին, ևս առաւել սո-
ցիալ-դեմոկրատին:

Վրացի սոցիալ-դեմոկրատներէից „անկախութիւն-
ների“ դէմ արտայայտեց միայն Գեղեղորին, բայց
նա էլ վերջը—Մերեթելու հակաճառութիւնից յետոյ
քւէտրկութեան ժամանակ մատ արձրացրեց Վրաս-
տանի անկախութեան օգտին:

Վրայ հասաւ վերջապէս նացիրոնալիտտների սը-

*) Եւ ինչպէս չվայելէր և ունկնդիր չլինէին նը-
բան առեկէներն ու գերմանացիք:

պատճառով մայիսի 26-ին կայացաւ Սէյմի վերջին նիստը. Սէյմը յայտարարեց ինքն իրան լուծւած, Զնդրհովհասի կամխարիտը վերացած և երկիրը Վրաստանի, Հայաստանի և Ազրբէյջանի միմեանցից անկախ հանրապետական պետութիւններէ բաժանւած:

Մեծ հոգեկան բաւականութիւն և ցնծութիւն նացիոնալիստական բունակում: Վրաց նացիոնալիստները մեծ ցոյց սարքեցին. սգևորւած ձառախօսութիւններ տեղի ունեցան ցարերի կուսակալների հոյակապ պալատի առաջ:

Միայն մի վրացի ո. դ. բանւոր չկարողանալով հանգուրժել նման մի նացիոնալիստական վահկանալիս, համարձակութիւն ունեցաւ զսկել ու պատաստել պալատից ցցւած վրաց միջնադարեան «ազգային» դրօշակը և նրա տեղը ծածանեցնել միջազգային բանւորական դեմոկրատիայի կարծիք դրօշակը:

Իս մի սիգնալ էր միայն այն բանի, որ մեռած չէր սօցիալիստական միջազգային դեմոկրատիան և նրա դրօշակակիրը...

VI

Մեր երկրի միմեանցից անկախ պետութիւնների վերածումը առաջացնում էր նորանոր քարդութիւններ, նոր աղէտների դուռ էր բացւում մեր ժողովուրդների համար. բացի այդ՝ նա պահանջում էր նոր քաղաքական-պետական կուրս, դիպլոմատիական նոր քայլեր և յարաբերութիւններ քառակ կօալիցիայի պետութիւնների հետ այն քաղաքական դեկալար խմբակների կողմից որոնք ստով գլխով փարւեցին ամենառեակցիոն գերմանօ-տաճկական իմպերիալիզմի գիրկը:

Շատերը կարծւում են, որ մեր երկրի ներկայ քաղաքական-պետական կեանքի կազմը, նրա ազգային-տերրիտորիալ անկախ պետութիւնների բաժանումը տեղի կունենար և այն դէպքում, եթէ արտաքին ու ներքին աէակցիոն ոյժերի թելագրանքն ու ճնշումը չլինէր և թոյլ արւէր ժողովուրդներին ազատօրէն քաղաքականապէս կազմակերպելու, ինքնորոշելու իրաւունքը:

Սա մի շատ սխալ կարծիք է:

Որ մեր երկիրը բաժան-բաժան ելաւ և ազգային-տերրիտորիալ անկախ պետութիւնների վերածուց արտաքին իմպերիալիստական թշնամի ոյժերի թելադրանքով և ճնշումով, դա ոչ ոք չէ կարող հերքել, ինչպէս և չէ կարելի հերքել, որ ներքին աէակցիոն ոյժերը—թուրք մուսաւաթիա ֆէօդալները, վրացի և հայ նացիոնալիստները իրանց կենտրոնախոյս քաղա-

քականութեամբ, ազգայնամօլ արամադրութեամբ և գործելակերպով ընդառաջ զնացին և նդաստեցին երկրի նման քաղաքական կազմակերպման գործին: Բայց որ մեր ժողովուրդները ազատ և անարգել ինքնորոշման ձեռնադրեցով—բեֆերենդումով ձայն տային Ռուսաստանից անջատման, միմեանցից անկախ տերրիտորիաների բաժանման, էտնօգրաֆիական կօնզլօմներու ներկայացնող մեր երկրում ազգային տերրիտորիալ անկախ պետութիւնների կազմակերպման օգտին, դա, մտածօրէն կարելի է ասել, անդի սնննալ չէր կարող: Վրացիներէ, հայերի ձայների ահագին մեծամասնութիւնը, ինչպէս և թուրքերի մի պատկառելի մասը չէր առ իր քաջ քաղաքական այն կազմի և կօցութեան օգտին, որ ստեղծուց մեր երկրում անցեալ 1918 թւի ապրիլի 9-ից և մայիսի 26-ից յետոյ: Այդպէս Թելազրիցիներէ երկրին մեր արաքին թշնամիները, այդպէս էլ կամեցան միայն մեր երկրի իշխող սէակցիւն գառակարգերը և նացիօնալիստական ոյժերը:

Վրաստանի զեկավարները և նացիօնալ-դեմոկրատները ընդունեցին զերմանական «պրօտեկտօրատը»: Ազրբեյջանի ֆէօդալները կամեցան միութիւն հաստատել Սուլթաններէ և էնկերներէ պետութեան հետ. իսկ Հայաստանի աւանտիւրիստ նացիօնալիստները փորձեցին ստեղծուած պայմաններում կիրառել «եւթալ քաղաքականութիւն»: սակայն, զորով լինելով որևէ վարկից և փստօնութիւնից արտաքին քաղաքական աշխարհում, նրանց «սիրաբանական» արտայայտութիւնները և «բարեացակամ» շոյուհիները կրբեմն տաճիկներին, երբեմն էլ դերմանացիներին, ոչ մի իրաւոր՝ հետեանք չունեցան: Ահա թէ մասնորապէս նշու մեր անդրկայտօղորդական փողովուրդներսած

նորերգութեան ամենաազնաւի բաժինը վերահեց հայ ժողովրդին:

«Անկախութիւնները» յայտարարելուց և կառավարութիւնները կազմակերպելուց յետոյ, ամենքը դիմեցին իրանց գործին:

Նէնց մայիս ամսին Փօթիում պ. Ա. Չիենկելին Ֆօն-Լօսովի հետ նախնական պայմանագիր է կնքում Վրաստանի և Գերմանիայէ յարաբերութիւնների «կանոնաւորման» վերաբերմամբ:

Ինչ որ սկսեց Իօրչինսկին, կամեցաւ վերջացնել Բօրչինսկին: Չիենկելու յաջօրոց Բամիշելին *): Սրա նախագահութեամբ, Վրաստանի պատերազմու-

*) Ն. Բամիշելին այն քօցասական արեւելից է, որոնք յայտնի են լինում սօվորաբար իրանց «եռանդուն և անձնէր» գործունէութեամբ, բայց և որոնք իրանց սպեցիֆիկ տնտեսական յաւկութիւնների շնորհիւ պարբօտ են ասկն օւ վրայ անել նէնց այն գործը, որին կամենում են կամ ցոյց են տալիս թէ կամենում են «անձնէրբար» ծառայել: Անցեալում նա յայտնի է եղել որպէս «ձախակողմեան յեղափոխական», «գործի մարդ» á la Բլանկի: Այնուամենայնիւ նա հանդիսացաւ Չիենկելիստական հոտանքի ամենաեռանդուն պաշտպանը և կողմակիցը: Ետա ժամանակ չէր անցել Պետրօբադէ դեմոկրատական խորհրդակցութիւնից յետոյ (միայն մի քանի ամիս). նա, իշխանութեան միտատեակ ոօցիալիստական կազմակերպման սկզբունքի ետանդուն կողմնակից կանդիտատալով, արտասանեց այդ ուղղութեամբ յիշեալ խորհրդակցութեան նիստերից մէկում այնպիսի ուշաբա-յեղափոխական մի ձառ, որ որտաւից ծագեր միայն վաստակից գլխաւորապէս բաշխիկներէ նստարտններից, իսկ մյժմ... ուշաբա-աջակողմեան:

Այդպէս է կեանքի իրօնիան. «եախ քոյաուուն ձախակողմեան» և ապա «ցոյաուուն աջակողմեան»:

Թիւրք կնքեց Բաթումում յունիսի 4-ին գաղնագիր
 Թիւրքիայի հետ: Նոյն այդ օրը—յունիսի 4-ին—Բա-
 թումում կնքեց գաղնագիր հայ և Թիւրք պատերա-
 կութիւնների մէջ (հայ պատերազմութիւն—Ալ. Սա-
 աիսեան, Բ. Քաղազնունի, Միք. Պաղաջանեան.
 Թիւրք պատերազմութիւն—Խալիլ բէյ, Վեհիբ Մէհմեդ
 փաշա):

Մենք հնարաւորութիւն չունենք ներկայումս
 կանգ առնել և քննել այդ գաղնագրերը: Բայց պէտք
 է ասել, որ նրանք այնքան ստորացուցիչ էին մեր
 երկրի համար, որ երևակայութեան անհասանելի է,
 թէ ինչպէս կարող էին ստորագրել նրանց տակ մեր
 «սոցիալիստ» և «դեմոկրատ» պատերազմները:

Յիշեալ գաղնագրերով Վրաստանը և Հայաստանը
 ընկնելով գերմանո-առձկական կօալիցիայի գերշխա-
 նութեան տակ, ոչ թէ միայն կորցնում էին բացարձա-
 կապէս իրանց ինքնուրոյնութիւնը, այլ գերմանական
 սրբի և առձկական ետթաղանի մշտական սպաննալի-
 քի տակ՝ դառնում էին անուր շահագործման և
 բնաջրջման օբիեկտ:

Ազրբէյջանի մասին աւելորդ է խօսել, քանի որ
 այդ երկրի բաղդը արդէն որոշած էր. նա գրեթէ
 Թիւրքիայի մի վիլայէթ էր դառնում շնորհիւ նրա
 «հրօնակից» Թուրք Ֆէօզալիների:

Բաւական է յիշել միայն, որ յունիսի 4-ի գաղ-
 նագրերի հիման վրայ Վրաստանի և Հայաստանի եր-
 կաթուղային և թէ այլ բոլոր ճանապարհները դրւում
 էին գերմանացիների և առձկանների արամադրութեան
 տակ՝ նրանց զօրոժտեքը և ռազմածիճիքները տե-
 զափօթիլու համար թէ դէպի այդ երկրների խորքերը
 և թէ մանաւանդ դէպի Բազու և Ջուլֆա—Պարսկաս-
 տանի սահմանները:

Գերմանացիները և առձկները այդպիսով հե-
 աապնդում էին երկու նպատակ. առաջին՝ ճնշել օրէկ
 ներքին յեղափոխութեան-ազգային կամ սոցիալական
 շարժում և երկրորդ՝ որ գլխաւորն է, պատենէլ կանդ-
 նեցնել անգլիական առաջխաղացման վտանգի առաջ
 և ըստ հնարաւորութեան՝ հարւածելով անգլիացիներին
 Պարսկաստանի և Միջագետքի սահմաններում,
 Թուրքցնել և յողթահարել համաշխարհային պատե-
 րազմում. գաղնակիցների ասիական ֆրօնտը:

Գերմանացիները և առձկները մուաք են գոր-
 ծում մեր երկրի խորքերը վաստօրէն 1918 թւի ա-
 մառայ սկզբներից:

Այնուհետև Անգրկովկասը և գլխաւորապէս նրա
 հայաբնակ և թուրքաբնակ գաւառները դառնում են
 ալան-թալանի, անուր վայրագութիւնների, կոտորած-
 ների և մի շարք պատերազմների առաջաքէղ:

Գրի անցուցանել և նկարագրել ներկայումս,
 դեռևս թուրք ապաւորութիւնների տակ անցեալ տար-
 այ գարնան և ամառուայ ամիսների ընթացքում
 մեր երկրի զանազան վայրերում տեղի ունեցած
 պատերազմները գլխաւորապէս հայերի և առձկների
 մէջ՝ ոչ հնարաւորութիւն կայ և ոչ էլ թէ յարմարու-
 թիւն: Համառարած արխանահեղ ընդհարումների և
 դէպքերի ծագման և զարգացման գլխական, անաչառ
 պատմութիւնը պահանջում է անառնելի օրո՞ հոգե-
 կան անդորրութիւն, սասնաստորութիւն և երկարատե
 քըրոնաթոր աշխատանք:

Ալեքսանդրապօլի բնակչութեան սղերբականիրա
 րանցումը և փախուստը, Ղարաքիլիսէի, Սարգարա-
 բաթի, Ղամարուի և Նախիջևանի մայրս—յունիսեան
 սպանդանոցները և հերոսական կռիւնները ներկայաց-

նում են իրենցից մէկ-մէկ էլօպէ, որոնք սպասում են իրանց շնորհալի և տաղանդաւոր պատմագրին:

Մտկայն ես չեմ կարող լուսթեամբ անցնել և մի քանի խօսք չեսել Բագուի էլօպէի, Բագուի պրօլետարիատի Յ-ամսեայ զարմանաերաց կախնեբի մասին, որոնք կազմում են մեր երկրի պրօլետարական դեմոկրատիայի սոցիալական-դասակարգային կաւրտատմութեան փայլուն էջերից մէկը:

W

Նաւթաշրջանի պրօլետարիաւը մեր Անգրկովկասի քաղաքական, յեղափոխական կաւր պատմութեան մէջ գրեթէ միջոտ ւաւանգարդի գեր է խաղացել բացի յեղափոխական շարժումներէ նախնական շրջանից և մի քանի յեղափոխական մտնետներից, երբ Քիֆլիսը տոն և ընթացք էր տալիս ամբողջ անդրկովկասեան երկրին:

1918 թւի մէր քաղաքական և սոցիալական կեանքի տմնակրիտիքական մոմենտին, երբ Անգրկովկասի մայրաքաղաքում և կենտրոնական կաւալարութեան սֆերաներում ղեկավարող սոցիալիստական խմբակները յանուն «աղղիբի համերաշխութեան» բլօկ էին կազմել երկրի տմնաւտէտկցիան հակայեղափոխական տարբերի հետ, ինչպէս էին օրինակ մուսուլմանները: Երբ սոցիալիստական խմբակցութիւններէ աջակողմեան օպորտունիստական թեւ խաչ ղնելով դատակարգային կաւր սկզբունքի վրայ յաղթողակել էր աղղային հարցի լուծման այնպիսի կողմակներով, որոնք յանգում էին միայն աղղայնամուլութեան և վարակում շովինիզմի թայնով իրանց յետեից ղնացող ղեմոկրատական մտտաներին, այդ պատասխանատու լուրջ մոմենտին, տաււմ ենք, Բագուի յեղափոխական սոցիալիստական պրօլետարիաւը, հաւատարիմ իր դասակարգային ինստիտուիին և զատակարարային կաւր սկզբունքին՝ բոլորովին հակառակ պատակերն էր ներկայացնում: միանգամ արդէն

վերջնականապէս ցարական հին սեփմբի լուծը թօթափելուց յետոյ՝ չհամենալով ընկնել մի այլ աւելի վատթար տաճկա-մուսուլման թիւստական լուծի տակ, նա անսղոք կռիւ յայտարարեց այդ ամենաւէակցիոն ներքին և թէ արտաքին ոյժերի դէմ: Դա պրօլետարիաթի այն կախնիքից էր, որը միայն հիացմունք կարող էր առաջ բերել սոցիալիստական աշխարհում և որը խրախուսանքի և աջակցութեան պարագ էր դրնում բոլոր անհեղձ գեմոկրատներէ և սոցիալիստներէ վրայ: Սակայն մի այդպիսի վերաբերմունք զէպի Բոպուն շտեանց Անդրկովկասեան դեկալարող սոցիալիստական իմբակներէ կողմից: Ինչու. որովհետև Բոպուի պրօլետարական շարժումները զեկալարում էր գլխաւորապէս բոլշևիզմը, թէև նրա հետ ձեռք ձեռքի տուած գործում էին Բոպուի գրեթէ բոլոր սոցիալիստական Ֆրոնտները:

Մենք նորագոյն բոլշևիզմի բարեկամ և կողմնակից չենք եղել և չենք կարող լինել ամենևին. շատ անգամ առիթ է եղել մեզ քննադատել նրա գործունէութիւնը, պայքարել նրա մեթոդներէ և միջոցներէ անխորտութեան դէմ. վերջապէս նրա Ֆէյերբախային, ուլտրա-սեմիտիցիոն կամ ինչպէս Գլխաւորովը կասէր. ուստի սեմիտիցիոն տակաբիան մենք չենք համարել իսկական սոցիալիստական-յեղափոխական տակաբիա: Բայց մենք երբէք չենք կարող սպասել, երբէք մեր մտքով չէր անցնի, որ սոցիալիստները կարող էին թոյլ աւալ իրանց թշնամական վերաբերմունք զէպի պրօլետարիաթի կռիւը այն պատճառով միայն, որ նա զեկալար հաննալով բոլշևիզմներին՝ կարող էր կուր պրօլետարում չեղել ուղիղ ճանապարհից և սխալմունքներ գործել:

Այն մոմենտին, երբ արտաքին և ներքին ուժակ-

ցիոն ոյժեր պատրաստուում էին ամեն կողմից կործանել ամենալեզափոխական քաղաքը իր շրջակայքով և կառարեալ բնաջնջման ենթարկել նրա բնակչութիւնը, անտարբերութիւնը այդ զէպրում արդէն մի յանցանք էր. իսկ աջակցելու անկարողութիւնը թուլութեան և այլ անյողթելի պատճառներով հանկանտի: Բայց երբ յայտնապէս թշնամական վերաբերմունք էր արտայայտուում թեկուզ հենց զէպի բոլշևիզական պրօլետարիաթը թշնամիներէ դէմ մղած իր օրհասական կռիւներէ ժամանակ. այդ արդէն բոլորովին անհասկանալի էր:

Ծերեթիւն իր զէպի բոլշևիզմը անձամ ատելութեան և թշնամութեան կրքից այն աստիճան կուրացել էր, որ դռնում էր որ բոլոր միջոցները թոյլատրելի էին բոլշևիզմը ջախջախելու և ոչնչացնելու համար. նա յոճախ ցոյց էր աւելի ինչպէս մի զեպիցիկ օրինակ «բոլշևիզ» Զուգիլու վրայ, որը սաստիկ մարտնչում էր բոլշևիզմի դէմ*):

*) Ծերեթիւն մասին ես արդէն մի անգամ արտայայտել եմ Գեարգրաֆի դեմոկրատական խորհրդակցութեան առիթով «Գոյքորդ»-ի 1917 թ. հոկտեմբերի համարներում գրած յօդուածներում: 1918 թ. մեր երկրի սղբերգութեան օրերին, նա հանդես եկաւ մի այնպիսի դերով, որ շատերի համար ապշեցուցիչ էր: Նա, որի շրթունքից պրօլետարիաթը բաւել ամենևին չէ վրէպում, շարունակում է դեռ մինչև այսօր հանդէս գալ ամեն առիթով իր սովորական «հրաշալի» ճառերով: Սակայն ճառերը անում են դատարկ հնչիւններ, երբ նրանք հակասում են կատարած գործին: Իսկ նրա կատարած քայլերն ու գործը 1918 թ.ին եղել են միայն ոչ թ նպաստ այն դեմոկրատիայի և պրօլետարիաթի, որոնց անուժով նա գիտէ միշտ խօսել և ճառարանել:

Տրկին Մինազորան, որը ս. դ. կազմակերպու-
թեան հին անգամներից է: յայտնում էր բացարձա-
կապէս ազդելի 10-ին «Եօրճա» թերթի գրասենեա-
կում կայացած ժողովում Մերեթելու և այլ բազմաթիւ
սօցիալ-գեմակրատներէ ներկայութեամբ թէ բոլշեփկ-
ների դէմ նոյն իսկ աստիկներէ հետ միասին կարելի
էր կուել:

Այդպիսի դաւանանական ձայներ և սէակցիոն
կարծիքներ մենք ասիթ ենք ունեցել յաճախ լսելու.
կրքեմ կարծելով թէ մի գուցէ իրացած լինելու պատ-
ճառով լաւ չէինք լսել կամ այնպէս չէինք հասկացել,
ինչպէս հարկն էր, դիմել ենք օտարերէ և համար ու-
րիշներին, որոնք կրկնել և վկայել են մեր լսածի
նշանութիւնը:

Պէտք է նկատել, որ այդ միևնոյն բոլշեփկմբ,
որի յեռեց գնում էր Բագրի պրօլետարիատը և որի
դէմ Անդրկովկասիան ղեկավարող սօցիալիստական
խմբակները կեանքի և մահու կռիւ էին մղում, զգա-
լի չափով ասորբերում էր Ռուսաստանի բոլշեփկմբ:
Թէև նա էլ Ռուսաստանի բոլշեփկմբն հետեւելով հա-
կազաշտպանողական էր իրան յայտարարել, սակայն
Բագրի կռիւների պատմութիւնը ապացուցանում է

ինչ վերաբերում է բոլշեփկմբ Վալիկօ Ջուղի-
լուն, որը գործում էր կովկասեան մենշեփկներէ հետ,
պէտք է տեսլ, որ որքան նա յեղափոխութեան առա-
ջին շրջանում յեղափոխական ետանդի և անձնաբերու-
թեան գովելի օրինակ էր հանդիսանում, նոյնքան էլ
սէակցիայի սև օրերին վրաց սօցիալ-գեմակրատայի
անկման շրջանում Սէյմի և բանտրութեան յեղ. դեմ.
քաղ. կազմակերպութիւնների լիկվիդացիայից յետոյ,
նա հակայեղափոխական գործունէութեան անհերքելի
ապացոյցներ աւելց:

միայն այն, որ նա փաստօրէն կանգնեց պաշտպանու-
ղական տեսակէտի վրայ:

Որքան էլ գէմ լինէինք նրա սւլարա-սեփոխու-
ցիան, մաքսիմալիստական գործողութիւններին: նա,
բոլշեփկմբ կամ նման մի այլ քաղաքական հասանք չէ
կարող աւելին տնել քան այն, ինչ կարող են թոյլ
տալ նրան կեանքի օրիեկտիւ պայմանները:

Անողոք և անտաշա կռիւը բոլշեփկմբ գէմ թու-
լացնում էր միայն Բագրի պրօլետարիատի կռիւ
թափքը, սպասում նրա պարտութեան. թէև միւս կողմից
զրա բազմաթիւ ասիթները ասլիօ էր ինքը բոլշեփկմբ.
նա իր միակողմանի աղանդաւորական աշխարհայեցու-
ղութեամբ ընդհանուր քաղաքական և սօցիալական
հարցերում, իր հալածող քաղաքականութեամբ, վը-
տարող աակաթիայով գեմակրատայի միւս սօց.
խմբակցութիւններին կաւամբ՝ վառում էր շարունակ
փոխադարձ ասելութեան և իշնամութեան կրակը մի
և անբաժանելի Մեծ Ընտանիքի — գեմակրատայի
շարքերում:

Սա դարձաւ ամենայեղափոխական քաղաքի անկ-
ման պատճառներից մէկը:

Վրդովկած մեր սօցիալիստական խիղճը մինչև
այժմ դեռ էլի չէ հանդատանում, երբ ասիթ է լինում
մտածելու այն մասին. որ Ֆէօդալ մուսուաթ կուսակ-
ցութիւնը, որը իր ներկայացուցիչներն ունէր անդր-
կովկասեան կոմիտարիատում և Սէյմում, եռանդուն
ջանքեր էր գործ դնում յայտնապէս-անկասկած իր
այդ ներկայացուցիչների գիտութեամբ և աշակցու-
թեամբ-կենտրոնացնելու բոլոր թուրք և մուսուաթ
սաղմական ոյժերը Բագրի պրօլետարիատը ջախջախե-
լու համար. իսկ Անդրկովկասեան կոմիտարիատը, որի
ղեկավարութիւնը գանուում էր սօցիալիստներէ և սո-

ցիալ-դեմոկրատները ձեռքում, թոյլ էք տալիս նրանց այդ ուղղութեամբ գործելու կամ մտանքի արանքով էք նայում նրանց գործերի վրայ: Մուսաւաթիստ և նման պեկեցիոն տարրերի հետ կազմած բլօկը յանուն «ազգի» համերաշխութեան» կեղծ ու խորհրդայական լոզունգի (իշխող պեկեցիոն դասակարգերի նկատմամբ) բալտրովին կուրացրել էք «սօցիալիստ» դեկավարներին: Նրանք իշխող պեկեցիոն տարրերի հետ համաձայնութեան գալով, համակերպելով և համերաշխելով իջան դասակարգային կուր տալարէզից, որով և պատահէր կանգնեցրին միջազգային բանւորական դեմոկրատիայի կռիւները առաջ:

Կառավարութեան մուսաւաթիստ անդամների սարժաժից յետոյ ազգային սեփօրմի դէմ (նրանք հրաժարեցին ստորագրել օրէնքի տակ) և այլ այդպիսի բացարձակ հակայիդափոխական քայլերից և գործերից յետոյ՝ կառավարութեան դեկավար սօցիալիստ կամ սօցիալ-դեմոկրատ անդամները հնարաւորութիւն էին գտնում ղեռ էլի շարունակելու նրանց հետ բարեկամութիւնը և գործակցութիւնը միեւնոյն կառավարութեան մէջ յանուն դարձեալ նոյն «ազգի»-ի համերաշխութեան»: Այս քաղաքականութիւնը ունեցաւ իր ազէտալի հետեւանքները. ֆէօդալ մուսաւաթիստները ամբարցրին իրանց սափ տակ հողը և կարճ ժամանակամիջոցում կարողացան դժոխք ստեղծել մեր երկրում իրանց պեկեցիոն քաղաքական նպատակների իրականացումը դիւրացնելու համար:

Մարտ ամսից ի վեր Բագւրի պրոլետարիատը կուր էր մղում Անգրկովկասի պեկեցիայի և գլխաւորապէս թուրք ֆէօդալիզմի քաղաքական ձգտումները և ուսնալութիւնների դէմ:

Գուր դեկավարն էր բուլշիզմը մինչև յուլիսի վերջերը:

Հերոսանան այդ կռիւները Բագւրում, Բագւրի շրջակայքում և ապա երկաթուղու գծի ուղղութեամբ մինչև Գիւրգամիր և աւելի հեռու նախ՝ տեղական մուսաւաթիստական պեկեցիոն ոյժերի, թուրք «վայրի» կոչւած «ազգային» զօրագնդերի և յետոյ՝ գրանց հետ միացած գերմանո-թաճկական խառը զօրքերի դէմ՝ տեղի ունեցան փոփոխակի բազառով մի քանի ամիս շարունակ: Բագւրի պրոլետարիատը ոչ մի տեղից, ոչ Անգրկովկասից և ոչ Ռուսաստանից սազմական և այլ շօշափելի օգնութիւն չկարողացաւ ստանալ:

Բանւորական խորհուրդները բուլշիկ դեկավարների ազդեցութեան տակ մերժում են անգլիացիների, ինչպէս և Բիչերախովի օգնութիւնը Բագւրից ոչ հեռու արեկաստանի տեքիտորիայի վրայ գտնուող սազմական ոյժերով: Բուլշիկները հրաժարում էին իմպերիալիստական որևէ պետութեան օգնութիւնից:

Բայց երկար մնալ այդ անօգնական գրութեան մէջ սովի և այլ գերմարդկային զրկանքների ճիրաններում անհնարին էր:

Բուլշիկները սկզբում անվստահութեամբ վերա-

բերելով դէպի Բիշերախովը՝ մերժեցին նրա առաջարկած օգնութիւնը. բայց երբ սա երաշխաւորութիւն և հաւասարեցնելու ակտ, որ ինքը անկեղծօրէն ընդունում և ճանաչում է խորհուրդներէ իշխանութիւնը, այն ժամանակ միայն բաղնիկները համաձայնեցին ընդունել նրա ազգամական օգնութիւնը:

Դնայելով որ դրանից յետոյ կախնեքը արձակելու և թուրքերի դէմ շարունակուցին, բայց և այնպէս գերմանո-տաճկական հեռագետէ անելի անող այժմերի առաջ Բագուն երկար կանգնել չէր կարող:

Բուշերիկների ազդեցութիւնը թուրքաւորով յաւիտիս 25-ին խորհուրդների ժողովը ձայներէ մեծամասնութեամբ որոշում է ընդունել անգլիացիների առաջարկած օգնութիւնը, իսկ իշխանութիւնը բաղնիկով տապալելուց յետոյ անցնում է մի նոր կառուցիտն կառավարութեան ձեռքը:

Այդ կառավարութիւնը, որը ունեցաւ մի ամիս և կէս կեանք, կազմուց այսպէս. Գասպիան զինուորական նաւատորմի վերընտրւած կենտրոնական կամիսէն կամ ալլապէս «Յինտրոկասպին» — բաղնիկի գեղավարների հետանալուց յետոյ — օգոտտոսի Ի-ին իր անգամների կազմից նշանակում է 5 հոգի այսպէս անուանւած հինգ զիկտատորներ, որոնց և յանձնում է Բագուի և նրա շրջակայ ընդհանրութիւնների ամբողջ կառավարութիւնը:

Այդ միևնոյն օրը միջկուսակցական խորհրդակցութիւնը (ս. դ., ս. ք. և դաշն.) բացի բաղնիկներից, որոնք, ինչպէս ասացի, հեռացել էին քաղաքից ամենակրիստիկական մոմենտին թողնելով ամեն ինչ երեսի վրայ) որոշում է միանայ «Յինտրոկասպին» զիկտատուրային, կցելով նրան մի մարմին «Ժամանակաւոր գործադիր կոմիտէի Գրեգեղում» անուն տակ:

Այդ նոր կառավարութեան (զիկտատուրայի և ժամ. գործադիր կոմիտէի պրեզիդիումի) անդամների կազմը հետևեալն էր. Բուշերիկ, Լեմէլին, Ա. Խոլլո, Առաքելեան, Պեչենկին, Երմակով, Մելիք-Սուլեյման, Տիւրքով, Վելուց, Ուսմանսկի. փոքր ինչ յետոյ այդ կազմի մէջ մտան լրացուցիչ նոր անդամներ:

Ճշմարիտ է, անգլիացիները մուտք են գործում Բագու, բայց չնչին ոյժերով, այնպէս որ բոլոր իշխանութեան օրով դիմադրել թշնամու մի քանի անգամ անելի մեծ ազգամական ոյժերին՝ Բագուն նոյնպէս չէր կարող:

Մեզանքների 15-ին Բագուն ընկաւ. մի քանի օր շարունակ տաճկական և թուրք զօրքերը ասխնայ աւերի և կոտորածի մատնեցին քաղաքը, քաղաքի շրջակայքը և նրանց բնակչութիւնը:

Դժուար է ստեմանել գոհների թիւը. անկասկած է, որ երկու տասնեակ հազարի չափ մարդ կոտորուց ու սնչացաւ Բագուի անկման առաջին օրերին: Ոմանք էտացնում են միայն կոտորած հայերի թիւը մինչև 25 հազարի, ուրիշները 30 հազարի: Այդ թւերի ստուգելը անհնարին է: Բայց Բագուի այդ կոտորածի և սարսափների անհաւանականութեան հիմք դժուար է ունենալ, քանի որ նման սարսափները մեր երկրի այլ վայրերում անզի ունեցան տաճկական հրոսակների առաջխաղացման ճանապարհին, քանի որ շատ անելի զարհուրելի պրեզիդենտներ անզի են ունեցել Սուլթաններէ և էնլերներէ դժբաղա երկրում:

Ընկաւ և աներեց Անգրիկովկասեան յեղափոխական կենտրոն Բագուն, որից յետոյ արբում է ամենուրեք ոչէակցիան և գերմանո-տաճկական սուրն ու եւթադանը:

Վրաստանում նացիոնալիստ սոցիալդեմոկրատ-

ներք՝ արեւմտեան շառք շարժանկում են հորվել այն միտքը թէ միակ երկիրը, որ պահպանուել են Ռուսաստանի օմե՛ս յեղափոխութեան նւաճումները, դա կրաստանն է: Սա ծաղր է միայն այդ յեղափոխութեան հասցէին: Այդքի համար այժմ այլևս կաակածելի չէ կարող լինել, որ Չինկելիներէ ե ապա ժողովաներէ կառավարութիւնը աւելց (գարձեալ «հանգամանքներէ» ստիպած»), ինչպէս սիրում են նրանք միշտ պնդել, ունկնջին թաղարականութեան անթիւ ու անհամար անկողիքի փաստեր, որոնք կարող էին միայն յիշեցնել ցարական հին ուսմանը*):

Բացի անկողիքի յետոյ, ինչպէս ասացի, ամբողջ Անգրիոկիանը ընկաւ գերմանացիներէ և սամիկներէ, սիրապետութեան տակ:

*) Առթիւնց օգուելով սլարոք եւ համարում անի, որ իր ժամանակին անհնարին եղաւ ինձ որպէս Անգրիոկիանի ա. գ. շրջանային կոմիտէի անդամ և փոխ-նախագահ՝ հրապարակով ներկայացնել իմ դիտողութիւնները յիշեալ կոմիտէի անունից ժողովաներէ և Փերիթիու ստորագրութիւնները կրող ան գրութեան գէմ, որը նրանք անցեալ ամառը թոյլ էին աւել իրանց ուղղելու Ռ. Ս. Ի. Բ. Կ. կենդանական իմաստներն Չինկելիու և սոցիալ-դեմոկրատիայի միտք լրջներնրի աններելի քայլեր և կորստարեք նացիոնալիտական թաղարականութիւնը վարագուրելու և սրղարացնելու համար: Ամբողջ մեղքը բարդի միտքն յուշեցիներէ և այլ հարկադրէ՛ր հանդամանքներէ իրայ՝ ինչպէս նրանք ջանում են ցոյց տալ այդ իրանց նամակում, միայն թէ անպարտ ներկայացնեն իրանց և վարագուրեն սեփական աններելի սխալները և յանցանքները, դա բարձր յանցաւորներէ հոգեբանական յատկանիշն է միայն:

Շատ տարօրինակ և ծանր տպաւորութիւն են զործում ի միջի այլոց նամակաղբիւրներէ հետեւեալ տա-

Աղբրէյջաւում ստեղծեց Սան-Սոյսկիներէ քեօզալ իշխանութիւնը տամիկ Նուրի փառայի դիկտատուրիայի տակ: Կրաստանում ժողովաներէ հակադեմոկրատական կառավարութիւնը գերմանական իմպերիալիզմի ներկայացուցիչ Յոն-Կրեաների օգրապետութեան տակ: Իսկ Հայաստանում զաշխակցութեան խմբապետական կորստարեք իշխանութիւնը գերմանո-տանկական բռունցքի և սրի ճակդութեան տակ:

Այդ բանկախ հանրապետական պատմութիւնները շարունակում են մինչև այսօր իրենց ողորմելի գրաւութիւնը:

Պարլամենտները զոյսթիւն ունէին միայն անունով որպէս դեկորացիա ունկնջին թաղարական նութիւնը վարագուրելու համար: Աղբրէյջաւի հոսի իսկ Ֆեօդալական պարլամենտը ևնց սկզբից ցրեց Սան-Սոյսկու և Նուրի փառայի դիկտատուրան: Իսկ միայն վերջերս կրկին վերարացեց *):

Պարենաւորման, ամառական և ֆինանսական

ղերը. «Նաճոգներէ ամենամար հարեաներ տեղացին հայ ժողովրդի զլիսին և մեց համար հազան հազները համարում ստեղծած պայմաններում նրա շրջանը պաշտպանութիւնը»: Այն, Չինկելիները արեւելիքի որ կարող էին անել հայ ժողովրդի և դեմոկրատիայի համար... իսկ նրանց թաղարականութիւնը վարող կառավարութեան յետագայ գործունէութիւնը ցոյց աւելց թէ ինչպէս նրանք լայն գիտեն պաշտպանել ժողովուրդների և մասնատորապէս հայ ժողովուրդի շահերը:...

*) Ընթերցողը չէ մոռանում ի հարկէ տար մեզ այս պատմական ակնարկը գրելու և ներկայ տարի սկզբում:

կացութիւնը հեռզհետէ աւելի անապահով, ասպնապալից և յուսահատական էր դառնում: Ամբողջ երկիրը մասնաւոր էր սովի, համաճարակ հիւանդութիւնների, անիշխանութեան, իսկ հարիւր հազարաւոր գաղթականութիւնը գերազանցապէս հայերից, ենթահայ էր մարդկային երևակայութեան անհասանելի զրկանքներին, տանջանքներին և մահացութեան: Այս բոլորը տանում էր մեր երկրի բոլոր ժողովրդներին դէպի այլտեսուած ու բնաջնջումը: Ստեղծւած ազդային պետութիւնների համար շնորհիւ գլխաւորապէս իրանց քաղաքական այլանդակ, քանազբօսիկ կազմակերպութեան և նացիոնալիստական ազգեսիւ քաղաքականութեան՝ անհեաշին եղաւ դէժ մասամբ յաղթահարել հին սեփիժի աւանդած կարգերից և համաշխարհային պատերազմից առաջացած դժւարութիւնները և բարգուծիւնները: 7—8 ամիսների ընթացքում տեսանք արգէն անկախ «ազգային տերիտորիալ» պետութիւնների տնըդունակ, անպիտան կառավարութիւնը և կործանարար նացիոնալիստական քաղաքական գործունէութիւնը:

Զիւնկելիներէ և ժորդանիաների «ազգային էարցի» լուծման եղանակը, որի դէմ սոսիթներ են կղկյաճախ պայքարելու կոսակցական և քաղաքական ժողովներում և որը ընդառաջ էր գնում մեր երկրի բոլոր նացիոնալիստական խմբակցութիւնների տնըշերին և ձգտումներին, իրականութիւն ստացաւ մեր կեանքում: Այդ բանի դառը պտուղները այժմ ամենքը տեսնում և ճաշակում են:

Տերրիտորիալ հարցի համար ծագած դեկտեմբերեան հայ-վրացական ոճրագործական պատերազմը, որի պատասխանատուութիւնը հաւասարապէս ընկնում է ժորդանիայի և Բաջազնունու կառավարութիւնների

գլխին և նրանց իրանց կամքը թելադրող պարլամենտական նացիոնալիստ մեծամասնութիւնների վրայ, նարբում էայերի և թուրքերի մէջ և վերջապէս Աշարիայում վրացիներէ և թուրքերի մէջ տեղի ունեցած արեւանակ կռիւնները արգիւնք են դիւաւորապէս, ինչպէս ասացի, ստեղծւած քաղաքական-պետական կազմակերպութեան, որի մէջ դեկտեմբերեան զիտանում են նացիոնալիստ-սեակցիան և նրաները:

Ախալքալաքի, Լոյսի, Աշարիայի, Շարուքի, Կախիշևանի, Ղարաբաղի և այլ տերրիտորիալ հարցերի առիթով առաջացած և ապագայում առաջանալիք անվերջ պատերազմները բացում են մեր երկրում մի պատմաւրջջան, որի սարսափներէ առաջ կարող են միայն նեմանալ Բալկաններէ արեւմուտ պատմութեան ամենաազդերդական մոմենտները:

Այդ պատմաւրջջանի սկիզբը դրեցին գերմանո-առնկական իմպերիալիզմը և նրա ծափերի տակ պարբոնող մեր երկրի քաղաքական դեկալար խմբակցութիւնների նացիոնալիստական սեակցիոն քաղաքականութիւնը:

Սակայն այդ գերմանո-առնկական տիրապետութիւնը ի մեծ քաղաւորութիւն մեր ժողովուրդների երկարատե շեղաւ: Գերմանացիները և առնկները թաղաւորեցին մեր երկրում 5—6 ամիս միայն:

Պարզ և հասկանալի բան և ամենքի համար, որ ինչպէս շատ ուրիշ երկիրների, այնպէս էլ մեր երկրի քաղաքական սխառացիան կախումն ունիք և ունիք արտաքին քաղաքական ուղիարհում գործող ոյժերի յարարերութիւնից և համաշխարհային պատերազմի այս կամ այն ելժից: Համակրապական քաղաքական աշխարհում տեղի ունեցած փոփոխութիւնները անդրադառնում են անմիջապէս նաև մեր երկրի կեանքի վրայ:

Ինչպիսիքները յազմութիւնները 1918 թւի ամառը Արևմտեան Ֆրոնտի վրայ, նրանց մեծ յաջողութիւնները աշխանային ամիսներին Բալկանեան Ֆրոնտում, որի հետևանքն եղաւ Բուլղարիայի յեղափոխական շարժումը, կառավարութեան օտապալումը և քառակ կօալիցիայից անջատումը, վերջնական մտնացու կարւածը ուրի գերմանական իմպերիալիզմին: Ծագեց Գերմանիայի յեղափոխութիւնը, որը սապալիլով Հոհենցոլերնների գահը՝ յայտարարեց Լանրապետութիւն:

Կազմալուծեց քառակ կօալիցիան:

Ինչպիսիքները յազմանակով ժողով գործեցին Գերմանիա, Աւստրիա, Ռուսիան, Քիւրցիա և Չեխոսլովակիա, Ռուսաստան, Կովկաս և այլն:

Նայեմքք ամսին անգլիացիները ժաման Բաղու: Գերմանական և սանկական սյժերը Արաստանից, Ազրբեյջանից և Հայաստանի սահմաններից Կառնընցին, Կեթոցան:

Ինկանները Թ-ից յետոյ ոչ մի սանկական սակեաք չկար այլևս մեր երկրում:

Թէ ինչ կլինի այսուհետև մեր քաղաքական վիճակը, այդ ցոյց կը տայ ժամ ազազան:

Մեր Կոնցրոնալիտաները գերմանո-սանկական օրինաւորութից յետոյ, սկսել են այժմ արդէն յարել սանկական օրինաւորութիւն: Այսօր այդ արագի-կամիական վիճակում ենք գտնուած ասուելալեո Վիլհելմեան Գերմանիայի Անարից զինոյ բոնոզ և նրա «հովանաւորութիւնը» զեա երէկ օրոնոզ և ոզերոզ Արաստանի Կոնցրոնալ գեմոկրատներին և ոցրեալ գեմոկրատ գեկազարներին, օրոնոզ գրեթէ ոչնչով լինաարբերում ներկայումս Կոնցրոնալ-գեմոկրատներից:

Յամենայն դեպս վերջերս բազաւ կարծես օկուսւած է ժպտալ մեր ժողովուրդներին. ինչ օր էլ լինի, բայց

ուելի վաա չի լինի քան գերմանո-սանկական տիրապետութեան օրով:

Մեր միակ փրկութիւնը օլեաք է սեփով անգր-կովկասեան ժողովուրդների քաղաքական միալիւան և գեմոկրատական Թուրաստանի վերականգնման մէջ:

Մեր երկրի միջազգային բանարական գեմոկրատիայի ոցրեալական և քաղաքական միութիւնը, նրա դաւալարգային դաշալի բոլոր ֆրոնտներում այդ միութեան կամար և դաշնակցութիւնը գեմոկրատական Ռուսաստանի հետ-տեա թէ ինչը կարոզ է միայն հանել մեր երկիրը այն ողբերգական վիճակից, որին դատազարուած է նա մինչև այսօր 1918 թւականից ի վեր:



1922 01 11 0849

ՀԵՂԻՆԱԳԻ ԱՇԽԱՏԱԿԱՆ ԳՐԱՆԵՐ

1. Բանասիրների ազանդագրութիւն. 1904 թ.
արտատպած «Մուրճ»-ից . . . 50 Կ
2. Փուչ Զաւակ. դրամա 5 գործ. 1905 թ. . . 50 Կ
3. Рабочее движение и социал-демократія на
Кавказѣ. Գ. Վ. Պիխանովի յոռա-
ջարանով. Ժընև, 1910 թ. (անլիզ.
հրատարակութիւն). . . 2 Ֆր.
4. La Guerre Actuelle et le Socialisme. Essai
historico-critique . . . 1 Ֆր. 20 ս.
5. Անցեալի յիշողութիւններէց . . . 1 ս.
6. Անդրհովհասի քաղաքական կեանքը
1918 թ-ին . . . 10 ս.

ԳՐԱՆ Է 10 ՌՈՒՐԸԼԻ

«Ազգային գրադարան»



NL0403969

